

Hentchak :  
ORGANE DU PARTI  
REV. ARMÉNIEN  
HENTCHAKISTE.

# Հ Ն Չ Ա Կ

ADRESSE  
M. BELLART,  
85, Peckham Rye,  
LONDON, S.E.  
Angleterre.

## ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՕՐԳԱՆ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

### ՆՈՐ ՄԵԹՕՊ

Ազատագրութեան գործի համար յոռի ու վնասակար ընթացք է հայ յեղափոխականների կողմից խուսափել ի ն ք ն ա ք ն ն ու թ ի ւ ն ի ց :

Շնորհով այն հանգամանքի, որ նրանք սիրում են իրանց չարածը՝ արած ներկայացնել, բաւականանալ փոքրիկ ջանքերով՝ երբ ամենամեծ ջանքերն էլ քիչ են, խոշորացնել ունեցած մի փոքրիկ գործը՝ երբ մեծ գործը կատարելու համար անընդունակ են իսկ յայանում. շնորհով նաև այն հանգամանքի, որ ընդհանուր առմամբ նրանք ճշմարիտ յեղափոխական չեն իրանց ոգով, իրանց մտածողութեան եղանակով, իրանց ընդհանուր աշխարհահայեացքով, — նրանք ներկայանում են աւելի իբրև յեղափոխութեան դ ի լ է տ ա ն տ ն ե ր . իսկ զիջտանտիզմի բընութեանը յատուկ է խոյս տալ կրիտիկական ինքնաքննութիւնից և մտաւոր վերահսկողութիւնից իր արածի և անելիքի մասին: Հէնց այդ պատճառով էլ այսօր, թիւրքահայ դասի ասպարէզում, նրանք գտնում են կատարելալ քաօսում, չունենալով և ցոյց չը տալով գործունէութեան ո՛չ մի լուրջ ու որոշ մեթօդ, ո՛չ մի որոշապէս նախագծւած տակտիկա, ո՛չ մի հիմնական ուղեցոյց միտք: Թւում է թէ՛ այս կամ այն գործող կուսակցութիւնն ի ր ա նը կատմամբ յանգած լինի այնպիսի եզրակացութեան, թէ ամեն բան ամենակարգին վիճակի մէջ է աշխարհիս ամենակարգին կուսակցութեան մէջ: Այդ հոգեկան ինքնագոհ տրամադրութիւնը, որ շարունակ անդրադառնում է նաև հրապարակի վրայ՝ յեղափոխական շրջաններում ու մամուլում, մասնում է իսկապէս յեղափոխականների միջակութիւնը (mediocrité), այլ և ֆանֆարօնութիւնն ու ձևականութիւնը: Մինչդեռ մի և նոյն ժամանակ ներքնապէս, օրդանապէս յեղափոխական գործը մնում է ընկած

մի տարամբ, անկերպարան, կայուն շրութեան մէջ, չը կարողանալով ստանալ ո՛չ ծաւալ, ո՛չ խորութիւն և ո՛չ էլ ուղղութիւն: Այդպէս, նա, յեղափոխական գործը, դարձել է խաղաղիկ ու ենթակայ ամեն պայմանների ու զէպքերի, որոնք երևան գալով, լինի Թիւրքա — Հայաստանում և կամ եւրօպական քաղաքականութեան մէջ, գնում են նրան մի կատարելալ կրաւրական զիրքում, անդօր օգուելու քաղաքական հոգեբանական մօմէնտներից, անդօր ո՛չ միայն դրօշմելու անցքերի վրայ իր նպատակայարմար ազդեցութիւնը, այլ և մինչև իսկ իր գոյութեան ու ջանքերի տպացոյցը տալու քաղաքակիրթ աշխարհին: Օ, ուր տեղը չէ, յերաւի, որ Օ.էյթունի ապստամբութիւնից ի վեր, երբ սուլթանը ստիպւեցաւ ստորագրել Մայիսեան բէֆօրմները, Աւրօպան այլ ևս չը տեսնելով ապստամբութեան մէկ այլ նշանակելի գործ, սկսաւ թիւրքահայերին նկատել իբրև «ոչխարների հօտ», որը, անկարող լինելով մինչև իսկ ինքնապաշտպանութեան դիմելու, հանդիսացաւ նրա աչքին անմեղ ողջակէզ: Աւ թէև զայրոյթով լցւած, բայց ձեռնածալ, այդ Աւրօպան մնաց հանդիսատես մարդկային հեկատօմբների տեսարանին՝ տարածւած նրա առաջ մի նորաձև ու նորգարեան կրկէսում, ուր պատմութեան մէջ երբ և է տեսնւած բռնակալներից ամենազղելին և ամենաարիւնառուշոր կատաղած ցուլի պէս սրի ուում էր չորս կողմ կործանման ու մահի դահձային գործը...

Այդ բոլորը, թւում է, պէտք է հայ յեղափոխականներին ցոյց տւած լինէր սրանց ամենաակար կողմը, գործունէութեան որոշ մեթօդի դժբախտ բացակայութիւնը, պէտք է մատը դրած լինէր այդ ամենախոր, բայց ո՛չ անբուժելի վէրքի վրայ և արձանացներ իր սմբողջ սպառնական զիրքով ու մտքով, մի նոր մեթօդի մեծ ու հիմնական հարցը: Բայց այդպէս չեղաւ: Ահա եօթ տարիից ի վեր յեղափոխականները թիւրքահայ դասի նկատմամբ պազել՝ մնացել են ինչ-որ մէկ անորոշ ու խա-

ւարում խարխափող զիրքում, առանց մտաւոր կողմնացոյցի, առանց կրիտիկական քննութեան, առանց նոր տակտիկայի, նոր մեթօդի որոնման ջանքի: Եւ սակայն գործունէութեան ամեն-մի մեթօդ չէ կարող ամենայրմարը լինել պատմական ու քաղաքական ամեն-մի րօպէին: Երկար տարիների ընթացքում մղած յեղափոխական կռիւների ու ջանքերի միջոցին առաջացել ու տեղի են ունեցել յեղափոխականների ու թշնամիի միջև՝ ոյժերի տեղափոխութիւններ, զիրքերի փոփոխութիւններ, ուժգնութեան ու հարւածների նորանոր հետեւանքներ, գործունէութեան ասպարէզի արտաքին ու ներքին նոր հանգամանքներ: Կեանքը, քաղաքականութիւնը, իրերի գրութիւնը չեն մնացել անշարժ, կայուն, բիւրեղացած վիճակում: Երանք անցել են զանազան Ֆազիսներ, պայմաններ ու քաղաքական րօպէներ և մտել են նորերի մէջ: Եւ զրանց հետ միասին յեղափոխական գործունէութիւնն էլ ենթակայ է անխուսափելի էվօլյուցիայի, որը բացասում է կռիւ նախկին ձևերը, նախկին ծաւալը — որ համեմատաբար խիստ սահմանափակ էր մնացել և այլ կերպ էլ չէր կարող լինել, — նախկին պրակտիկական տակտիկան: Այսօր նա եկել՝ մտել է այլ շրջանի և այլ պայմանների մէջ, և, հետեւաբար, հայ յեղափոխականներն էլ թիւրքա — Հայաստանում պէտք է զծագրեն զրանց համաձայն գործունէութեան նոր մեթօդ: Յեղափոխական գործունէութիւնը, հաստատելով ամենից առաջ իր պրակտիկական ընդհանուր սկզբունքները և որոշ ուղիք, միշտ մնալով հաւատարիմ իր բուն ոգիին, իր պատմական կոչման և իր հասարակական զիրքին, պէտք է ընդունակութիւն ունենայ իրականութեան էվօլյուցիայի և իրերի նորանոր գրութիւնների հետ միասին առաջ գնալ, միշտ ձգտելով ամեն-մի նոր շրջանում պահել, այլ և աճեցնել իր դերի ազդեցութիւնը և իր զարգացման գործնական պայմանները, որոնք նրան միջոց տային աւելի և աւելի տարածելու ծաւալով, աւելի և աւելի արմատներ ձգելու՝ խորութեամբ:

Եթէ այժմից իսկ ամեն ջանք գործ դրել՝ որոշելու ու մշակելու յեղափոխութեան գործունէութեան նոր մեթօդ թիւրքա — Հայաստանում. եթէ, միւս կողմից, այդ՝ միանգամ որոշւած՝ մեթօդն ամենայն ժրամանութեամբ չը գործադրելի այժմից իսկ, — այն ժամանակ յեղափոխական ազատարար գործի այս տաղնապը — որ արդէն շատ երկար տեւեց — գեւ շուտ չի

ունենալ իր վախճանը: Այդ դէպքում յեղափոխականների ինքնագոհ բաւականութիւնը փորկի գործերով, որ գրւում են շատ խոշոր տառերով և փառաբանում աւելի էլ խոշոր խօսքերով, կը լինի դատարկ կարասի աղմուկ և նրանց ինքնախարհութեան տխւար միւրաժները՝ յանցանք:

ԿՏՐԻՃԸ

„Ա՛ն ծամերէս այս ծաղիկը,  
 „Գոհար վզկապս ա՛ն վզէս.  
 „Թող մինն ըլլայ դժւար ծանրիդ աստղիկը,  
 „Քեզ ուղեցոյց ուր կուզես,  
 „Միւսը քեզի՝ շղթան իմ քաղցր սիրոյս,  
 „Մինչև որ դու հասնես բախտիդ, աչքիս լոյս“:

\*

Նայեց եարին, խոր ա՛ն քաշեց,  
 Խոր ա՛ն քաշեց... ու գընաց.  
 Եւ այդ ժամը սիրտը մաշեց  
 Խղճուկ եարին՝ որ մընաց:

Լուսնկայ էր այն գիշերը.  
 Գլգլալէն վըտակը  
 Սարէն վազեր դէպ խորշերը,  
 Ուր քընանար ձորակը:

Ասես այժեամ՝ լեռնէ ի լեռ  
 Կերթար անվախ կարիճը,  
 Եարի ծաղիկն իր քաջալեր  
 Կուրն մէջ մինչ մահիճը:

Քաջի արիւն իր մէջ կեռար,  
 Արծէ հայեացքը թռչեր,  
 Թուչեր հեռուն, ուր կը գոռար  
 Պատերազմըն իր կոչեր:

Գոհար վզկապն պիտ շղթայէր  
 Վանդակի մէջ անոր սիրտ,  
 Մինչև վատին նա քայքայէր,  
 Մինչև կտորէր շղթան բիրտ:

Կուր դաշտէն դառնայ յաղթող՝  
 Արժան եարի կարօտին,  
 Որ պիտ բերէ ձեռքով դողդող  
 Սիրոյ պսակն ու գօտին:

Չինար մէջքին բերէ գօտին,  
 Հանէ վզկապն կտրճի,

Պրսակ կապէ քաջի ճակտին —  
Առնեն օրհնէնքը խաչի...

Ասես այծեամ լեռնէ ի լեռ  
Քաջ զինւորը սրլանայ.  
Եարի ծաղիկն իր քաջալեր՝  
Անմահ կուին մօտենայ:

Եւ նա հասաւ... Սուր ու գնդակ,  
Թունդ ու բոժբիւն, կոտորած,  
Արիւն, արիւն... շուրջ դժնդակ  
Պատերազմը գոռգոռաց...

Եւ նա կուեր ասես առիւծ՝  
Գոհար վզկապն իր կուշտին,  
Ծաղիկ-աստղիկն իր ուղեցոյց,  
Ինչպէս վերջին հրաժեշտին:

Կուեց — ընկաւ... խոր ախ քաշեց...  
Ներկրեցան արիւնով  
Ծաղիկ, վզկապ՝ որ սիրտ մաշեց,  
Մեռաւ՝ եարի անունով:

Լռեց կուր... Երկինք՝ փռած.  
Լուսնայ է գիշերը...  
Ա՛հ, ծաղիկը խոր է խրած  
Քաջի վերջին խորշերը:

Չար թշնամու շղթան ընկաւ,  
Բայց խեղճ եարի սէր-շղթան  
Քաջի կուրծքը խրեց՝ մըտաւ,  
Սիրտը փաթթեց յաւիտեան:

Եւ այն սիրած զի վերան  
Լոկ կոլորէր գիժ քամին  
Եւ կը սուրար վայրին լեռան՝  
Երկչոտ ոտքն այծեամին...

\*

- »Ա՛ն ծամերէս այս ծաղիկը,
- »Գոհար վզկապս ա՛ն վըզէս.
- »Թող մինն ըլլայ դժւար ճանբիդ աստղիկը,
- »Քեզ ուղեցոյց ուր կուղես.
- »Միւսը քեզի՛ շղթան իմ՝ քաղցր սիրոյս,
- »Մինչև որ դու հասնես բաղբիդ, աչքիս լոյս»:

ԼԵՌԵՆՑ

# Թ Ղ Թ Ա Կ Յ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

## ՆԱՄԱԿ ԹԻՐԻԲԱՅ-ՀԱՅԱՍՏԱՆԻՅ

Ը. Գ. ԱՐԱՀԻՍԱՐ, 10 Մայիս, 1904

(Շար. նախորդ թւէն եւ վերջ)

Կառավարութիւնը արիւնակէզ կոտորածներէն վերջ, հոս իբր թէ բարենորոգում ըրաւ քանի մը հայ ոստիկաններ գրելով և նիգոյքի անունով դադիր յոյն մը, որպէս քրիստոնեայ շահերու պաշտպան միւթասարըֆ մուավինի (կառավարիչի օգնական) կարգելով: Յիշուած վատը երկար ատեններէ ի վեր ոն կը պահէր հայերուն դէմ, սպասելով առիթի մը՝ որուն մէջ իր բոլոր ժահրը դուրս տար: Առիթն ալ չհնուացաւ սակայն:

1876-ի հրդեհին ժամանակ—երբ այս քաղաքի հայերը շատ մեծ նիւթական փասններ տուին,—այրեցաւ Մայր-Եկեղեցին, Մուշեղեան Ազգ. վարժարանն ու Ազգ. Առաջնորդարանը: Շատ մեծ աշխատութիւններէ ետքը, վերջապէս հազիւ հազ յաջողեցաւ վերաշինութեան հրաման մը առնել Պոլիսէն, ու մինչև իսկ 200 լիրայ ալ նուէր եկաւ այդ նպատակին Արքունի գանձէն՝ յանուն կրթասիրութեան: (Կեցցէ Սուլթանը): Երբ շէնքին էն ստորին յարկին պատերը հազիւ բարձրացած էին, յանկարծ կառավարութիւնը դադրեցնել տուաւ զպրոցի վերաշինութիւնը: Անկէց աստին տարիներով շէնքին այդ կիսաշէն ստորնայարկը բաց մնաց: Երկու տարի առաջ Առաջնորդարանի վերածուեցաւ այդ մասը ու այդպէս ալ կը շարունակուի մինչև հիմակ: Անցեալ տարի թէ Առաջնորդարանի կողմէ Պատրիարքարան՝ և թէ միւթասարըֆ նետիմ պէյի կողմէ բարձրագոյն Դուռը դիմումներ եղան: Բարեբաղդաբար այս երկու կողմանց դիմումը ապարդիւն չելաւ և զպրոցի վերաշինութիւնը Սուլթանի կողմէ արտօնուեցաւ, ըստ սովորութեան, յատուկ ֆէրմանով մը: Ժողովուրդը բնականաբար ցնծումով ողջունեց այս յաջողութիւնը և սկսաւ գուրգուրալ վերջապէս ազնոր զպրոց մը ի մօտոյ ունենալու երազին վրայ: Տեսնելու էր թէ ինչ ոգևորութիւն կար ժողովուրդին վրայ, երբ խուճեցրով քար կը կրէին ձրի՝ բերդին տակէն, և երբ շէնքին հիմերը դրուել սկսուած էր: Շէնքը տակաւ բարձրանալ սկսաւ, վարի 2 յարկերը շինուած էին արդէն քարաշէն, երրորդն ու չորրորդն ալ շուտ յաջողեցին անոնց. աւելցուեցաւ հինգերորդ մըն ալ և քեօշկին փայտերը հազիւ նետուած՝ դարձեալ կառավարական արգելքը:

Թէ ո՛ւր էր գաղտնիքը:

Քաղաքին առաջնորդ Սատեթթեան Սմբատ վարդապետ սիրալիր յարաբերութիւն կը մշակէր քաղաքին այն ատենի կառավարիչ Արաբ Մահմուտ նէ-

տիմ պէյի հետ: Մեր անփորձ վարդապետը միւթէսարը ֆի հետ ունեցած բարեկամութեանը վրայ վստահելով, շէնքը թէ ընդարձակութեան և թէ բարձրութեան տեսակետով Փէրմանի մէջ նշանակուած չափէն շատ մեծ կը բռնէ: Հսկայ շէնքը իր վիթխարի կազմածքով, կանակը Մայր-Եկեղեցիի հոյակապ շէնքին կանակին տը-ւած կը բազմէր քաշաքին էն աչքառու դիրքերէն մէկին վրայ: Եկեղեցիին դիրքին ու շինութեան փո-ռաւորութիւնը ոչ-նաւազ նախանձելի էր արդէն թուր-քերուն և յոյնբուն համար՝ (հոս հարկ է փակագծի մէջ յիշել՝ թէ մեր քաղաքին մէջ գտնուող 250 տան չափ Յոյներն ալ իրենց վատութիւնով թուր-քերէն վար չեն մնար) որոնց նախանձը շարժած էր, տարիներէ ի վեր, ու երբ անոր քովստի բարձրացաւ դպրոցի շէնքն ալ, նոյնքան հոյակապ՝ չոր նախանձով վստեց զիրենք բոլորովին: Միւթէսարը ֆի մուսվին գաւաճան Նիգոլաքին, որ քանի՛ քանի անգամներ յպէն պու էրմէնիլերէ մուսվին օլտուղու մու պիտիբէճէյիմս ըսած էր, առիթը գտաւ ամենագծու՞մ գերը խաղա-լու և հայերուն վնասելու: Չեոք առաւ գայմագա-մը զինուորական իր սոսկալի հայտեցութիւնովը ծա-նօթ: Սա արդէն տրամադիր հայերուն վնասելու ձգ-տումին, ամեն միջոց ձեռք առաւ, որպէս զի արգի-լել տայ որ և է կերպով վարժարանին շինութիւնը: Դժբաղդաբար մասի փաթթոց ունէին՝ շէնքին ֆիր-մանի՝ հակառակ, շատ մեծ շինուիլը: Անխոհեմ ա-ռաջնորդը պատրաստ փաստ տուած էր ձեռքերնին: Վատ աւելի գայմագամին ու մուսվինը այս տխուր դե-րին մէջ ձեռք ձեռքի տուած նախ թուրք ժողո-վուրդը զրգուել փորձեցին, ու ապա սխան բաց է ի-բաց գործել: Պարտկել կարելի չէր, և բան մըն ալ չէր կրնար ըսուիլ այս արգելքին դէմ՝ որ ամեն բա-նէ աւելի օրինական էր: Միւթէսարը ֆին և ուրիշներ դպրոցի վերաշինութեան մազպաթան պատրաստուած ատեն պարպ տեղը յորդորած են Սմբատ վարդա-պետը որ շէնքը մեծ ցուցնէ, բայց նա հակառակած է, շէնքը մեծ ցոյց տուելու պարագային անյաջող ելլելու վախէն: Այս կերպով զիմելով կառավարի-չին՝ ստիպեցուցած են շէնքին շինութեան գործը ար-գիլել և պահանջել որ վրայի յարկը քակուի: Բայց որովհետև միևնոյն ատեն ալ զօրաւոր կերպով գոր-ծը Պոլիս ձգել պէտք էր, մանաւանդ որ իրենք մի-թէսարը ֆի հակառակ էին ու այս կերպով անոր վրայ պատասխանատուութիւն կրնային հրաւիրել, ուստի ա-կեր գայմագամին Երզնկայի Գ. զօրորանակի միւշիւրին հետեւեալ իմաստով հեռագիր մը տուած է:

«Տեղեւ պատամբ հայերը քաղաքին ամենէն բար-ձրը և ուժով դիրքերը գրաւելէ և վայրկեանէ վայր-կեան սպառնական հանգամանք ունեցող ընթացք մը բռնելէ վերջ, հիմակ ալ ուղղակի զօրանոցին, զին-ւորական մթերանոցին ու բոլոր թուրք ժողովուրդին վրայ իբր թ ա պ ի յ է (մտրակոց) դպրոց մը շինե-

լու վրայ են: Քաղաքապետը, որ իրենց հետն է, ի-րենցմէ 200 լիրայ կաշառք առնելով անտարբեր կը մնայ ասոնց բոլորին հանդէպ և լուռ կը մնայ՝ թող-լով որ հայերը ուղածնուն պէս շինեն այդ շէնքը՝ որ վաղը մեզի համար մեծ փորձանք է»:

Այս և ասոնց նման իմաստ ունեցող հեռագիր-ներ ու մ ա զ պ ա թ ա ն եր շինուելով կը զօրուին վալիին, եպարգոսին և ին: Հայ ազգադաւաններն հոս ալ իրենց դերը կը խաղան և առանց խղճահարութեան կը ստորագրեն այդ խեղաթիւրուած և բոլորովին շին-ծու գրութիւնները, որոնց թարուն նպատակը է ա.) հայոց դպրոցի շինութիւնը արգիլել, որով նպաստ տա-լէ ալ կաղատին, բ.) միւթէսարը ֆին վճեժ լուծել (անձնական) և գ.) պաշտօնէից առջև թրքասէր ե-րևնալ:

Մեծ-Եպարգոսն ու վային ալ պաշտօնապէս կար-գիլեն դպրոցի շինութեան գործը, ու տեղիս կառա-վարութեան միջոցով կը պահանջեն որ վրայի յար-կը և շէնքին մէկ մասը քակուի: Այս արգելքին սկզբի օրերուն մէջ վատ մուսվինը, հայերուն լա-երևնալու կեղծ վարպետութիւն մը ծախելու և մի-ևնոյն ատեն գործը բոլորովին վնասելու համար խնդ-րագիր մը կը շինէ և առաջնորդին տալով խորհուրդ կուտայ, որ ստորագրեն ու կառավարիչին տան, որպէս զի ատով՝ իրենց բերանով իսկ հաստատել տայ շէն-քին Փէրմանի հակառակ շինուած ըլլալը: սակայն չի յաջողիր:

Այս շինութիւնը արգիլելու համար գայմագա-մի, մուսվինի, հաճի Խէլէզ ըսուած արիւնկազակին, (աս՝ գողութենէ և հայերու կրած հարուածներու շնորհիւ առաջ եկած մեծատուն մ'է, որ հիմա ամբողջ քա-ղաքը բռնած է, գնելով շատ մը շէնքեր, արտեր ու պարտեզներ: Հակահայ մըն է և բաւական տեղ դերեր խաղացած 95-ի կոտորածներուն ատեն), Թուրք ծանօթ հայտեսաց պաշտօնեաներու և իրենց միացող քանի մը դաւաճան հայերու \* ստորագրած հեռագիրներու և մազպաթաներու արգիւնքը սա կըլ-լայ որ վարժարանին շինութիւնը կարգիլուի, վրայի յարկը կը քակուի և միևնոյնն ալ անորոշ վիճակի մը մէջ ձիւնին ու անձրեւին տակ կը մնան և միւթէսարը ֆ Մահմուտ Նէտիմ պէյ պաշտօնաւիկ կըլլայ գրեթէ ամիս մը վերջ:

Ահա ասանկ թուրք պաշտօնեաներու վստահելով անփորձ վարդապետ մը անխորհուրդ անհաշիւ ձեռ-նարկներուն, դպրոցի շէնքը Փէրմանի հակառակ պայ-մաններով շինել տալուն պատճառով Գարահիսարի հայութիւնը բարոյապէս ու նիւթապէս մեծամեծ վը-նասներ ունեցաւ: Հայերուն այս վնասէն ու միւթէ-սարը ֆի պաշտօնակութեան փոխարէն Սուլթանը վար-ձատրեց իր հաւատարիմ վատ պաշտօնետոյ գայմագա-մը՝ զայն միրալայութեան աստիճանին բարձրացնելով:

Անցեալները թուրք մը դպրոցի շէնքին առջևէն

\* Կ. Հիւսիսեան, Թաղէոս Պուրնուզեան, Յակոբ Ե՛հրիկեան և Սարաֆ Գասալար, ասոնց չորսը:

անցած տան յգահակ մեկթէպ կըսէ, արապը եռութ-  
տուն, գայմագամը տա միրալայ էթտին (խարեբայ  
գպրոց, արապը կըլեցիր ու գայմագամն ալ միրալայ  
շինեցիր:

\* \* \*

Փետր. 19-ին գիշերը կառավարիչին տանը գուռը  
Ազգ. վարժարանի մէջ պաշտօնավարող Զարայի Բար-  
Տատ գիւղէն կարապետ Ասատուրեանը իբր յեղա-  
փոխական ամբաստանող անստորագիր նամակ մը կը  
ձգուի:

Ասոր վրայ կառավարութիւնը յեշուած Ասատուր-  
եանին տանը և գպրոցին մէջ իրեն վերագրած դա-  
րակները խուզարկել և բան մը չի գտնելէ վերջ դարձ-  
եալ բացարձակ հակառակութիւնով, հայ ըլլալուն  
համար լոկ, թեկերը կապած արսոր զրկեց իր գիւղը յա-  
նիրաւի:

Թիւրքիոյ մէջ հիմա ուսուցչութիւնն ալ և պաշ-  
տօնին բերուով պարտագանց լիտի աշակերտ մը զըպ-  
րոցէն վճնտելն ալ յանցանք է, վասն զի այդպիսի-  
ներու հակառակութիւնով եղած թշնամանքները կը  
քաջալերուին կառավարութեան կողմէ: Գժբազդարար  
դասատուին վերագրուելու մասին քանիցս եղած ա-  
ղերաներ ու դիմումներ ապարդիւն մնացին և այսօր իր  
բազմանդամ ընտանիքը նիւթական ամենածանր թըշ-  
ուառութեան մ'է ենթարկուած շնորհիւ հայ վատե-  
րու և կառավարութեան կեղեքիչ ծրագրին: Պահ-  
պանողական հայեր, որոնք վախին անունը խոհեմու-  
թիւն գրած են, կառարկին փոխանակ զէնքով ու սը-  
րով գործելու կըթուրթիւնով գործել: Եւ թէ սա-  
կայն կառավարութիւնը թողու որ ուղածիդ պէս զըպ-  
րոցական գործը առաջ տանիս: Այսօր շէնք շինելու  
չ'թողուր, վաղը դասատու մը կը բանտարկէ, միւսօր  
ալ կը խուզարկէ և բան մը պատճառ բռնելով կը  
փակէ ևն:

\* \* \*

Վեցիկեան հաճի Համբարձում տնուն հայ մը  
ամուսնալուծութեան խնդրի մը վրայ նոյն ատենուան  
առաջնորդ Ամբրոսիոս վարդապետի անհետատես մէկ  
յամառութեան պատճառով թուրք եղած էր սակից  
7 տարի առաջ, և վերջերս ալ յունագաւան դար-  
ձած: Ասոր միւսլիմանութիւնը ձգելը յանցանք սեպ-  
ուելով, կառավարութիւնը կնոջը հետ միասին Գաս-  
թամպօլ քչեց անցեալները, շատ լաւ գաղափար մըն ալ  
տալով թուրքիայի կարծեցեալ կրօնական ազատամը-  
տութեան վրայ...:

\* \* \*

Վերջը եր բոլոր գոյներով ծանօթացուած մուսլիմը  
որչափ ալ չըլտարէն բնաւ համակրութիւն չէ գը-  
տած երեք ազգերուն մէջ ալ, սակայն շնորհիւ...

կնոջ՝ տուփոտ խնկարկուններ ունեցած է իր շուր-  
ջը թուրք պաշտօնեաներէն: Իր ազգակից յոյներն իսկ  
հակառակած են իրեն բոլորովին և քանի անգամներ  
հեռագիր տուած և հանրագրութիւն շինած են իր  
մասին: Ասկից երեք շաբաթի չափ առաջ, իր կնոջ  
սիրահարներէն և իր... բարեկամներէն (?) Տօգթօր  
Սնֆէթի գուռը յունարէն գրով յայտարարութիւն  
մը փակցուած էր իր մասին «Թէ թուրքիոյ զին-  
ւորական, վարչական ու մատակարարական ներքին բու-  
րը գաղտնիքները, ընթացքն ու զինւորական շարժում-  
ները հաղորդած է կիրաստնի Ռուսական հիւպատո-  
սին»: Երբ թուրքին մասին իրեն լուր կուտան, ա-  
մենայն պարծենկոտութեամբ կը պատասխանէ «պէն  
տէօվէթ խայինի տէյիլիմ, միլլէթ խայինի իմ» (ես  
տէրութեան անհաւատարիմ չեմ, այլ՝ ազգիս): Իսեղծ  
տրամաբանութիւն: Ինքզինքդ արդարացուցիր ստով՝  
թէ գատապարտեցիր: Եւ սակայն յայտարարութիւնն  
ու յոյներու բողոքներն ալ կարևորութեան չ'տըր-  
ուեցան և ապարդիւն անցան ու տակաւին իր պաշ-  
տօնին վրայ է՝ շնորհիւ բող կնոջը: Ատոնք ազու-  
կըլան երբ ինդիրը հայու մը մասին ըլլայ: Բայց  
երբ ինդիրը յոյնի մը և մանաւանդ կաւատի մը  
վրայ է, նշանակութեան չառնուիր:

\* \* \*

Ասկից քանի մը ամիսներ առաջ իր բանի բա-  
նի դաւաճանութիւններովը ծանօթ հաճի կարապետ ա-  
ղա Հիւսիսեանը միութեանս կողմէ տէրրօրական գոր-  
ծողութեան ենթարկուեցաւ՝ փաստաբան Իօմէր էֆ.  
Թուրքին հետ գիշեր մը, եղբօրը աունէն մեկնած  
միջոցին: Սակայն գժբազդարար հարուածը մահացու  
չեղաւ և մէկ-երկու վերքով ազատեցաւ:

\* \* \*

Աստուծի և սահմանազրուխի հերոսական կռիւ-  
ները նորէն գրգռեցին թուրք խուժանը ու կառավա-  
րութիւնը հայերուն դէմ: Օրէ օր յարձակումի, կո-  
տորածի կը պատրաստուին՝ միւս կողմանէ ալ սակայն  
վախնալով թէ մի՞ գուցէ հոս ալ ապստամբութեան  
տեղի տան և վնասուին: Թշնամական ցոյցեր սկսած  
են նկատուիլ թուրք ժողովրդին կողմէ՝ թէ բաղաբին  
մէջ և թէ շրջակաները: Ծատկին օրերը վախով ան-  
ցան, Տեսնենք ժամանակը ինչե՞ր կը ծնի:

\* \* \*

Ասկից քանի մը ամիսով մը ցանկալի ընկեր մը կորսն-  
ցուցինք Զատիկին Գ. օրը: Քաղաքի հինաւուրց բեր-  
դին Սարլախ կէօլ ըսուած կողմը պտտած ժամանակ  
ոտքին սահելովը գահավէժ մեռաւ Պ. Տիգրան ճիվ-  
ճիվեան, 27 տարեկան անձնուէր երիտասարդ մը, խո-  
րունկ թախիծի մէջ անմխիթար թողուով իր բոլոր

ընկերները, որոնք յարգանքի յիշատակութիւնով մը պահած ունին իր պաշտելի անունը իրենց արտերու անջնջելի ծայքերուն մէջ:

Ամսուկէս առաջ հոս հասաւ տեղիս նորընտիր միւթէսարըՔը Սալահէտտին պէյ՝ որ թոյլ մարդ մը կերէի:

ՀԱՅՈՒ ԶԱՒԱԿ

Յ. Գ. Այս օր Պարտէզի թաղի դպրոցը թըշնամաբար կրակ ձգուեցաւ, բայց շնորհիւ հայ երիտասարդներու ջանքերուն շուտով առաջքը առնուեցաւ: Կառավարութեան ջոհանկիրաց խումբը մարելէ վերջ միայն հասաւ. կերէի թէ այս խումբի պաշտօնը կրակ մարելէ աւելի հանդիսատես ըլլալ է՝ բանի որ վընասը հայուն է:

Վաստաւ Կարապետ Եֆէնտի զրպարտիչն և դպրոցը կրակ ձգողն ի վերջոյ յականէ անուանէ կը գրեմ:

Հ. Զ.

ՆԱՄԱԿ ԿՈՎԿԱՍԻՑ

ԲԱԹՈՒՄ, 6 Յուլիս, 1904

Նախորդ յօդուածներէցս մինում նկատել էի, թէ թիւրքիայում անցկացրած օրերին երանի են տալու մեզ մօտ, Ռուսաստանում, ապաստանած թիւրքահայերը: Այդ տխուր գուշակութիւնս այսօր, դժբաղդաբար, իրականանում է արդէն և մենք ահանատես ենք լինում մի շարք սիրագործութիւնների Արջի քոթոթների կողմից, որոնց առջև մարդու մազերը բիզ-բիզ են կանգնում: Այսօր ամենեքեան վկայում են, որ նոյն իսկ պատմական ենիջերիների շահատակութիւնները նսեմանում են Նիկոլայ Բ-ի սինլքոր կամակատարների արարմունքների առաջ: Ուզում եմ թեւել այդ սիրագործութիւններից մի քանիսը, բայց ինքս էլ չեմ իմանում՝ ո՞ր մէկը յիշեմ և որը թողնեմ, այնքան հարուստ է մեր դժբաղդ երկիրը այդ կարգի եղելութիւններով: Ահա նմուշներ:

Սրանից մի քանի օր առաջ Բաթում եկաւ Սե Ծովի պատերազմական նաւերի մի մասը՝ ցոյց տալու համար «Ռուսական պետութեան ծովային ահարկու ուժը», որը, սակայն, բարեբաղդաբար, Հեռաւոր Արեւելքում բոլորովին այլ բան է առում: Հարկաւոր էր տեսնել, թէ ինչպէ՞ս մի քանի հարիւր ծովային զինւորներ մարտանաւերից դուրս թափուցին վայրենի բացականչութիւններով և սովալուկ գայլերի նման գրոհ տւին Բաթումի խեղճ առևտրականների խանութների վրայ . . . Ոստիկանութիւնը օր առաջ արդէն անուղղակի կերպով հասկացրել էր հասարակութեանը, որ «խոհեմ» վարւին մաթրոսների հետ և

որ վերջինների արարմունքների դէմ ոչ մի բողոք չուէրու չէ: «Պոլիցիան պատասխանատու չէ մաթրոսների (նաւաստի) տալիք վնասների համար» . . .

Մենք մի բոպէ չէինք ուզում հաւատալ նոյն իսկ մեր աչքերին, երբ տեսնում էինք, թէ ինչպէս պետութեան և հայրենիքի պաշտպան ցարի սալտաթները (զինւորներ) մանում էին աղքատիկ խանութները, գլխաւորապէս մրգավաճառների և նպարավաճառների կրպակները, պահանջում էին այս կամ այն ուտելիքը, խմելիքը և այլն, վայրենաբար լլպստում և ապա «գնածների» փոխարժեքը խնդրող խանութպանին էլ փառաւորապէս թակում, հայհոյում և առանց մի կոպէկ վճարելու ուղի լինում, շարունակելով իրենց զգելի արարմունքը և փողոցներից անցող-դարձողին անխնայ թակելով ու գժօխային աղաղակներ բարձրացնելով . . .

Վուք չէիք գտնի մի զինւոր, որը փառաւորապէս գինովցած, մարդկութիւնն ուրացած և անասելի աղտի մէջ կորած չ'լինէր:

Ոստիկանութիւնը, ամենուրեք մեղի նման վըլտացող ոստիկանութիւնը, հանդիսատես լինելով այդ անդրջօհեղեղեան գործողութիւններին, անտարբերութեամբ շուռ էր տալիս գլուխը և քթի տակին ծիծաղում. երևի սրտանց ուրախանում էր ինկվիզիթորների այդ լեգէտներ, որ զինւորները եկել էին լրացնելու իրենց շահատակութիւնները . . . Նման զնրման սիրէ, ի հարկէ:

Հետաքրքրութեան համար գիմում եմ մի հաստափոր ոստիկանի և հարցնում. «Արդեօք զինւորներն իրաւունք ունին այդպէս վերաբերելու դէպի խեղճ մարդիկ?»: Ոստիկանն հանդիսաւորապէս պատասխանեց. «Մենք առաջուց յայտնել էինք, որ զինւորների ջ ա հ ե լ ու թ իւ ն ն եր ի դէմ պէտք է անիշաչար լինել, որովհետև նրանց սիրտն երւած է: Գըրանից աւելի անկեղծ, նպատակայարմար պատասխան չէր կարող լինել. . . Սակայն պէտք է խոստովանիլ որ զինւորները շատ անգամ սրան կամ նրան թակելիս, հայհոյելիս, կողոպտելիս հարցնում էին՝ «սօզլտանի?»: (համաձայն էք) և ապա անցնում միւսին:

Թիֆլիսական փողոցի վրայ, Վեռն Սարիբէկեանցի մագազինի առաջ, մի երեկոյ բազմաթիւ զինւորներ այնքան ծեծեցին մի անմեղ Հայ երիտասարդի, որ սա հազիւ մահից ազատուց:— Լօրիս—Մելիքեան փողոցի վրայ նոյն հերոսներից մի քանիսը լրբաբար յարձակում են մի ջահէլ վրացուհու վրայ . . . շօշափումներից ու լիտի խօսքեր օրիորդի երեսին ասելուց յետո՛ հրէշային քրքիջներով հեռանում:

Թշուառ կառապանները ի զուր էին փորձում աղաչել այդ հրէշներին, որ առանց վարձատրութեան կառք նստում են՝ նստեն, գոնէ չճանրաբեռնեն ֆայետօնը 6—7 հոգով: Ո՞վ էր լսողը: Նրանք նըստում են, որքան կարելի էր տեղաւորել կառքին մէջ

մուտքին առաջ և այնքան ժամանակ քշել տալիս, որ կամ իրենցից մէկն ու մէկը գլորելի կառքից ցած և նրան օգնելու համար իրենք էլ ցած գան, որով կառապանը միջոց գտնի խոյս տալու և կամ ձիերը արիւն քրտինքի մէջ լեզուները կան գցեն և մնան փէտացած . . .

200-ից աւելի մարդիկ ծեծւել են 2—3 օրում այդ շներէց: Այդ զոհերից մին, մի թրքահայ երիտասարդ, չգիտանալով տասնեակ զինւորների անօրոք ծեծուիէտին, երբ անտուժ է, որ դանակն ոսկորին հասաւ՝ անբժանակի օրհնեալ գնդակներով նրանցից մէկին սատկեցնում է և 2—3-ին էլ վիրաւորում, որից յետոյ մնացեալները թողնում են իրենց ընկերների սատակները և հերոսաբար փախչում: Արիժառուն ազատ է: Նոյն գիշերը սպանւեց և մի ուրիշ զինւոր, իսկ վիրաւորւածների և ծեծւածների թիւը մեծ է: Կատարւել են տասնեակ լլկումներ: Բաթումի համար ահ ու սարսափի օրեր էին դրանք, որ չէ կարելի մոռանալ:

Իսկ Սուխումում կառավարութիւնը բաց է ի բաց յայտնել է հասարակութեան, որ երբ մարտնականը Սուխում գան՝ զինւորների արարքներից խուսափելու համար պէտք է փակել բոլոր խանութները, մինչև որ հեռանան նաւերը:

Դեռ այդ սարսափից աչք չբացած՝ գահիճ գովեցինը Բաթումի նահանգապետի միջոցաւ յայտարարեց, որ 8 օրում ընթացքում Բաթումում գտնուող մի քանի հազար տաճկահայերը կ'ամ պէտք է ընդունին ռուսահայտակութիւն և կամ հակառակ դէպքում արքայաբերու են Ռուս. հիւսիսային նահանգները: Ռուսիայի սահմաններից հեռանալու իրաւունք չէ տրուում. 8 օրւայ միջոցը լրանում է ամսիս 9-ին, որից յետոյ անբաղդ Հայաստանցին մինչև յատակ քամելու է գառնութեան բաժակը՝ դիմելով կամ դէպի հուր, կամ դէպի սուր: Անտանելի է այդ խեղճերի դրութիւնը. ընդունեն՝ արքայաբերու են Սիբիր, չընդունեն՝ դէպի անյայտ անկիւններ են քշւելու: Ցաւալի է, որ օտար պետութիւնների հիւպատոսներին եղած դիմումներն էլ անօգուտ անցան . . .

Ես էլ չեմ շարունակի, որովհետև դրանք վերջ չունեն:

Ի.Պ.ՏԵՆԻ

**ՑԱՐԻՉՄԻ ՄԵՔԵՆԱՅՈՒԹԻՒՆՆԵՐԸ**

Մի ժամանակ ելզըզի Գագանը գիշեր ու ցերեկ ոչ բռն ունէր, ոչ դադար. ամեն տեղ և ամեն վայրկեան «յեղափոխականի» կամ յեղափոխութեան ուրուականն առաջն ունենալով . . . : Թղթատար ազանիներն էլ մի ժամանակ, իբրև ըմբոստ յեղափոխականներ, իբրև պետութեան ռիսերիմ և արիւն-

ուշտ թշնամիներ Տաճիկ կառավարութեան կողմից, ամենախիստ պատժի ենթարկուեցան . . . : Սուլթանի դափնիները հանգիստ չեն տալիս Նիկողայոս I-ի ծուռ Նիկողայոս II-ին և նրա աչալուրջ կառավարութեան . . . : Օրհասական արջերը իրենց անկման ժամանակ հզորագոյն են կուռւմ: Յարիզմի խարխուլ գահը ամուր պահպանելու համար, Ռուսաստանի բոլոր ժողովուրդների այդ կեղեքիչները, սզուկները և դահիճները ամեն մի քայլափոխում հայ յեղափոխականի են հանդիպում: Հիւանդ ուղեղները զառանցում, բանդագուշանքներ են ստեղծում հայկական ահագին յեղափոխական գնդերի, զօրաբանակների և ահաբեկի պրոպագանդիստների: Եւ ահա թէ ինչպէս են կատարում իրենց պարտականութիւնները կամակատար բարակները, ցոյց են տալիս ներքև զեպեղած շրջաբերականները, որոնց նմանները դեռ շատ լոյս կը տեսնեն Ռուս աչալուրջ չինովնիկների կողմից:—

Կովկասեան շրջանի գորքերը հայ յեղափ. պրոպագանդի ազդեցութեանից գերծ պահպանելու միջոցներ.

Սրանից մի քանի տարի առաջ Կովկասի հայ ազգաբնակչութեան մէջ սկսուեց նկատուել մի առանձին զարթնումն Հայաստանի ինքնուրոյնութեան անիրականալի գաղափարի:

Առաջ եկան գաղտնի հայկական կոմիտէներ, որոնք հրապուրանքով և սպառնալիքով սկսեցին եռանդուն կերպով բորբոքել այդ գաղափարը և չարամբտօրէն ուղղել դէպի ատելութիւն՝ ընդհանրապէս Ռուսաստանի դէմ՝ և, մասնաւորապէս, այն ամենի դէմ, ինչ որ ռուսական է:

Կովկասեան զինւորական շրջանի զօրքերը, որոնց շարքերում առաջուայ պէս ազնւօրէն, հաւատարիմ և անձնանուիրաբար ծառայում էր հայ զինուոր—երկար ժամանակ հայկական պրոպագանդի ազդեցութիւնից դուրս էին մնում: Սակայն վերջին ժամանակներս չարամբաս ինտելիգէնտ — քարոզիչները եռանդագին կերպով ուղղեցին իրենց յանցաւոր գործունէութիւնը շրջանի զօրքերի վրայ: Քահանան, ուսուցիչը և, մինչև անգամ, պաշտօնեան, ըստ երևութիւն բոլորը միացել էին, որպէս զի ընկճեն հայ զինուորի մէջ նրա համոզմունքը երգման սրբութեան մասին և շեղեն նրան դէպի ոճրագործ փախուստ ծառայութիւնից և գէնքի ու հրանիւթ մթերքների գոյութիւն: Թէև զինւորների մէջ հայերից գտնուեցան այնպիսիները որոնք ոչ միայն ընդգիմանում, այլ և խուճարարներին յանձնում էին իշխանութեան, այնուամենայնիւ եղած են ցաւօք սրտի, նաև այնպիսիները, որոնք, հետեւելով սուտ ա գ ի տ ա ց ի ա յ ի, հեռանում էին պահակատեղերից, տանելով զէնքերը և մինչև անգամ կազմում էին գաղտնի ընկերութիւն:

Ընդունելով վերին աստիճանի կարեւորութիւնը և այժմութիւնը ամենահեռանդուն կուռւի այս նորա-

ծին չարիքի դէմ, կովկասեան շրջանի զօրքերի ժամանակաւոր հրամանատարը յանձնարարել է ինձ խընդրելու բոլոր զօրապետներին՝ թէ աւագ և թէ կըրտներ, ուղղել իրենց բոլոր ջանքերը և ուշադրութիւնը այն բանի վրայ, որպէս զի զերծ պահպանեն այն ամեն տեսակ գայթակղութիւնից ցարգ ազնիւ մնացած Յարի ծառային, որ կարող է սերմանել նրա մէջ քաղաքական ագիտատորների շարամիտ պրոպագանդը:

Արա հետ միասին նորին գերազանցութիւն գէներալ-Լէյտէնանտ զրեզէն բարեհաճեց յանձնարարել զօրքերին հետեւեալ միջոցների մի շարք, որոնց հաւաքական գործադրութիւնը, անկասկած, գործի համար բարերար հետեւանքներ կունենար:

1) Պրոպագանդի դէմ կռուելու համար զօրապետները կարող են օգնութեան կանչել հայ սպաներին և պատուիրել նրանց ազգելու իրենց հեղինակութեամբ դաւանակից զինւորների վրայ:

2) Անհրաժեշտ է խրախուսել և վարձատրել ամեն միջոցներով հայ զինւորներից նրանց, որոնք ի կատարումն ծառայութեան պարտքի և երգման երեւան կը հանեն և կը յանձնեն իշխանութեան այն գաղտնի գործիչներին, որոնք կը փորձեն շփոթութիւն սերմանել զօրքերի մէջ:

3) Խօսակցութիւնների միջոցով հարկաւոր է բացատրել հայ զինւորներին պրոպագանդիստների գաղափարի էութիւնը և ամբողջ յանցաւորութիւնը և միևնոյն ժամանակ պնդել երգման սրբութիւնը և Ռուսաստանի օգնութիւնը, որը միայնակ իր ջանքերով ազատեց հայերին այն տաժանելի կացութիւնից, որի մէջ գտնուում էին նրանք Տաճկաստանում և Պարսկաստանում, և որը, որպէս իրենց հայրենիքը, ապահովել է նրանց բարեկեցութիւնը:

4) Չանալ ազգել նրանց վրայ այնպիսի եղանակով, որպէս զի իրենք իրենց և միմեանց պահանջներն պրոպագանդից և ոճրագործ հրապոյրներից, որպէս զի նրանք միմեանց հսկեն, յիշեցնելով, որ նրանցից մէկի յանցաւորութիւնը կարող է նրանց բոլորին վարկաբեկ անել յաջս իշխանութեան:

5) Յոյց տալով հայ զինւորներին կարելի վատահոլութիւն, միևնոյն ժամանակ նրանց վրայ ամենախիստ հսկողութիւն նշանակել զօրաբաժինների մէջ, որ նպատակ պիտի ունենայ գլխաւորապէս նրանց զերծ պահպանելու վատ և հէնց իրենց համար վնասակար ազգեցութիւնից:

6) Առանձին շրջահայեցողութեամբ թոյլատրել զօրանոցներում հայ այցելուների հետ տեսակցութեան,

7) Վաշտի հրամանատարը պարտաւոր է իմանալ, թէ որտեղ է լինում և արձակուրդի ժամանակ ո՞ւմ է այցելում իր ստորագրեալ հայ զինւորը:

8) Ղիգ և ջանք թափել, որպէսզի բոլոր հայ զինւորները Ռուսերէն խօսին, որի համար հարկաւոր

է պահանջել, որ տեղացի զինւորները իրար մէջ ուրիշ լեզուով չը խօսեն, բայց եթէ Ռուսերէն:

9) Տեղացի զինւորներին որպէս զօրաշարքերի մէջ, նոյնպէս և խշտեակների կամ մահճակալների վերայ քնելու համար բաժան բաժան անել և խառնել Ռուսների հետ, թոյլ չը տալով որ առանձնացած խմբեր կազմեն:

10) Յատկապէս աշալուրջ ուշադրութիւն պիտի կենտրոնացնել այն հայ զինւորների վրայ, որոնք ապրում են զօրագնդի առանձին շինութիւնների մէջ, որպիսիք են հացագործները, կապտենարմուսները, արհեստաւորները, գրագիրները զօրաբաժնի տնտեսան կազմի մէջ այլ ծառայողները:

11) Հարկ է ուշի ուշով հետեւել, որպէս զի, ըստ ներքին Ծառայութեան կանոնադրութեան 47-րդ յօդուածի, զօրանոցներում զինւորների մէջ գործածելու համար միայն այն գրքերը և տպագրուած հրատարակութիւնները թոյլատրուէին, որոնք վաւերացրուած են վաշտի հրամանատարի ստորագրութեամբ:

12) Արք որ կասկած լինի, որ զօրանոցները մուք են կործել չարափնաս բրոշուրներ և կոչեր — չը պիտի քաշուել մանրամասն խուզարկութեան ենթարկելու զինւորների բոլոր իրեղէնները:

13) Ըստ կարելոյն զգաստութեամբ վերաբերւել զօրքից դուրս գտնուող այն տարրերին, որոնք կարող են վնասակար ազգեցութիւն ունենալ հայ զինւորների վրայ, այս դէպքում առանձին ուշադրութիւն դարձնելով հայ քահանաների, ուսուցիչների և տեղական ինտէլիգենցիային պատկանող անհատների վրայ, որոնք այս կամ այն յարակցութիւնն ունին հայ զինւորների հետ:

14) Մասնաւոր անձանց վրայ հսկելու գործում — որոնք կարող են վատ ազգեցութիւն տարածել զօրաբաժինների մէջ, վերջինների հրամանատարները պարտաւոր են համաձայնութեան մէջ մտնել տեղական վարչութեան և ոստիկանութեան հետ, որպէսզի նրանց միջոցով ըստ կարելոյն վերահասու լինեն պրոպագանդիստների նկատմամբ կամ որպէսզի նրանց օգնութեամբ կարելի լինի ձգբորտուէն հսկել այն տրւների վրայ, ուր յաճախ այցելում են հայ զինւորները:

15) Աչկեղեցին — որը ընտրում է պահպան զօրքի հրամանատարը, — ուր ժամերգութիւն է կատարում քահանան, որի հաւատարմագոյն հպատակութեան համոզմունքների վրայ կարելի է վստահել, զինւորներին պիտի ուղարկել խմբերով ենթասպայի ղեկավարութեամբ, լինի վերջինս հայ թէ ուրս, միևնոյն է. զօրախումբը ժամերգութեան վերջանալուց յետոյ՝ լիակատար կազմով յետ պիտի դառնայ դէպի զօրանոցները:

16) Չանալ քահանափակել երկար արձակուրդ խնդրող հայերի թիւը, և

17) Այն անձինքների մասն, որոնք կասկածե-

լի են յեղափոխական պրոպագանդի փորձեր անելու տեսակէտից, տեղեկացնել զօրաբաժնի հրամանատարին:

Ի դէպս, եթէ բոլոր ձեռնարկելիք միջոցները չպահուեցին լիակատար յաջողութեամբ, և այս կամ այն զօրաբաժնում երևան կը գան հերձուածողներ (?), ապա զօրաբաժնի հրամանատարը առանց տատանուելու պիտի անմիջապէս չարիքը ոչնչացնէ, մեղաւորներին կայանաւորելով, կամ իրենց կախուած ուրիշ միջոցներ գործադրել:

Միևնոյն ժամանակ պարտաւորաբար զեկուցանելու է իշխանութեան և, առանձին կարևոր դէպքերում, հաղորդել ժանդարմային վարչութեան: Շրջանի զօրքերի ժամանակաւոր հրամանատարը յանձնարարելով ինձ ի լրումն իմ շրջաբերական գրութեան 4 դեկտ. սոյն տարւայ, ընդ համարաւ 4384, հաղորդելով Ձերդ Գերազանցութեան վերոյիշեալը, վստահութիւն է արտայայտում, որ ամեն մի զօրապետ բացի վերոգրեալներէց, ինքն իր ձօտ կը գանէ դեռ էլի ուրիշ միջոցներ և եղանակներ այն բանի դէմ, որպէսզի այն պրոպագանդան, որ շեղում է զինւորին իր պարտքից և երգումից, մուտք չգործէ նրան յանձնուած զօրախմբի մէջ և որպէս զի հայ զինւորները յետագայումս ևս մնան այն վստահելի և իրենց պարտաւորութեան անձնանուէր մարտիկները, ինչպէս են եղել մինչև այժմ: Իսկականի տակ ստորագրել է,

Սպայանկոյտի հրամանատար

գեներալ-լէյտենանտ Բելիաւսկիյ

Ուղիղ է՝

Պաշտօնակատար Աւագ-Աբիւտանտի պարուհիկ

Վ. ԱԿՏՈՎԻԶ

**ԿԱՏԱՐԵԼԱՊԵՍ ԳԱՂՏՆԻ**

Կաղզուանի շրջանի կառավարիչը փետր. 27, 1904, 132 թուահամարով մի զեկուցագիր է ներկայացրել կարսի զինւորական նահանգապետին, որի պատճէնը թարգմանաբար զետեղում ենք ստորև.

Կախիջեանի գաւառապետը փետր. 20, 33 թուահամար մի տեղեկագրով ինձ յայտնեց, թէ՛ բերանացի, սակայն հաւաստի աղբիւրներից յայտնի է, որ սոյն փետր. 11-ին կարս քաղաքից Ջիբնի գիւղն են եկել չորս անձանօթ հայեր, քաղաքացիական զգեստներ հագած, որոնք ծածուկ յայտնել են երիտասարդներին, որպէս զի նրանք պատրաստ լինեն, որովհետև իրենք կը յայտնեն ուր և երբ պիտի հաւաքուին: Ջիբնի գիւղից այս անձինք մեկնել են Նախիջեան, նոյն գաւառի մի քանի գիւղեր էլ հանդիպելով: Ի միջի այլոց նրանք քարոզում են, որ յեղափոխական կոմիտէի գործողութիւնների համար

հասել է ամենաբարեյաջող ժամանակը, որովհետև Ռուսաստանի ուշադրութիւնը, իսկ գլխաւորը՝ զօրքերը ուղղած են դէպի Ծայրագոյն Արևելք, Տաճկաստանում սակայն սկսուել են լուրջ անկարգութիւններ, և իբրև թէ Անգլիան շտապեցնում է նրանց, հայերին, բանալ թշնամական գործողութիւնները, սկսելով Ռուսաստանում, իսկ յետոյ անցնել սահմանից Տաճկաստան:

Գաղանի տեղեկութիւններին նայելով՝ կոմիտէները կենտրոնացնում են իրենց խմբերը Բաբրան, Անի՝ կարսի շրջանում և Քուրթուղի՝ Էջմիածնի գաւառում: Ծանուցանելով Ձերդ Գերազանցութեան վերոյիշեալի մասին, յայտնում եմ, սրա հետ ի միասին իմ ստորագրեալ պաշտօնեաներին կագագրել եմ, որպէս զի ինձ յանձնուած շրջանի հայ բնակչութեան վրայ հսկողութիւնը խստացնեն, և առաջարկում եմ նախիջեանի մասի կառավարչին աչալուրջ քննութիւն բանալ, նպատակ ունենալով իմանալու թէ ովքեր էին այն անձինք, որոնք Ջիբնի գիւղն են եկել փետր. 11, բացի սրանից կարգադրել եմ, որ Ջիբնի և Բաբրան գիւղերում պահականոց բացուի, իսկ Նախիջեան գիւղի պահականոցը վերցնուի:

(Ստորագրութիւններ)

**Ժ Ո Ղ Ո Վ Ր Դ Ի Կ Ա Մ Բ Ը**

«Թո՛ղ կորչի Բօբրիկօվը»:

Այսպէս բացականչեց, այսպէս կամեցաւ Ֆինլանդական տանջող ժողովրդի գիտակից զաւակների հազարաւոր բաղմութիւնը Մայիս 23-ի բացօդեայ ժողովում, ազատ երկնքի տակ, Հէլսինկիֆօրում: Եւ նրա այդ կամքը, որ ճշգրիտ արտայայտութիւնն է Ֆինլանդական ժողովրդի զգացումների՝ առաջացած նրանում իր կրիտիկական դրութեան պատճառով ուստական ըէ ժիմի տակ, ամենափայլուն կերպով կատարուեցաւ մի շաբաթից քիչ ուշ — Յունիս 3-ին:

Աւգէնիա Շտուամը եղաւ այս անգամ ժողովրդական կամքի հերոսաբար կատարողն այնպէս, ինչպէս տարիներ առաջ Բալմաշենները և նման հերոսները Սիպեագիւնների և նմանների վրայ Ռուսաստանում, ինչպէս նաև հայ հերոսները Տաճկահայաստանում, Պոլսում և ամիսներ առաջ՝ կովկասում՝ շատերի հետ նաև կովկասեան Բօբրիկօվի — Գալիցիների վրայ, թէև, զժբախտաբար, ոչ-յաջող վախճանով այս վերջինի վերաբերմամբ . . .

Ինչ է այդ կամքը, ինչո՞ւ է նա «տիտղոսաւորներ» արիւնը խնդրում:—

Այդ կամքը՝ ոչ այլ ինչ է, եթէ ոչ հարա-

զատ արդիւնքը ուստական բռնակալութեան գործ դըրած ճնշումների, հալածանքների, նրա պարագիտական անյարգութեան, նրա սիստեմատիկ կեղեքումների և արիւնհեղ ներքին ու արտաքին քաղաքականութեան, որոնց պատճառով ժողովուրդները ուստական Արծևի թեկերի տակ դառնում են կատարեալ ոչնչութիւնների իրանց մարդկային և քաղաքացիական կեանքով, իրանց անհատական և հասարակական տարրական պահանջներով, և վերածւում են կենդանի մեքենաների՝ մըշտապէս դատապարտուած անձայն, անծպտուն, դամենա հպատակ՝ խոնարհութեամբ հայթայթելու Ռուսաստանի արքայական տանը անվերջ գումարներ— զեխութեան, շուայրութեան համար մի կողմից և միլիտարիզմի համար— երկրորդ կողմից: Բացի այդ:— Հայթայթել այդ նոյն միլիտարիզմի համար թնդանութային միս՝ յանձին իրանց ամենաթարմ երիտասարդութեան, որ առաջ քան ջարդելը, ծեծելը թշնամու թնդանութային ծանր գնդակների ուժեղ հարւածների տակ ֆիզիքապէս և բարոյապէս փչանում է նաև զինուորանոցներում, անպէտքանում մարդկային հասարակական և բարոյական կեանքի պահանջների համար:

Մի անգամ արդէն դրած լինելով ժողովուրդներին այսպիսի պայմանների մէջ՝ ցարիզմը հեղհեղեղ աւելի ևս առաջ գնալ է փորձում: Նա պահանջում է թէ հարազատ և թէ հպատակ ազգերից մտածել այնպէս ինչպէս ինքն է մտածում և յարմար տեսնում մտածելու, պաշտել այն, ինչ որ իրան համար սուրբ է, խօսել, գործել, շարժել այնպէս, ինչպէս պահանջում է իր վարչական շահը, իր բացարձակ կամքը . . . Իսկ հակառակ կերպով վարուողները, որոնք համարձակում են նրա պաշտօնական կամքի դէմ իրանց ժողովրդական կամքը գնել ու դուրս գալ իրանց մեքենայական դերից— որ չեն կարող դուրս չի գալ— և ձգտում են բաւականութիւն տալ իրանց անհատական, հասարակական, քաղաքացիական և նոյն իսկ զուտ զգացումային ցանկութիւններին, պատժում են այն բոլոր միջոցներով, որոնք ընդունւած և գործադրում են Ռուսաստանում, ինչպէս և թիւրքիստանում:

Եւ Բօբրեկօփները, Գալիցիներն ու նմանները ոչ միայն ցարիզմի— Պլեէի իշխանութեան կոյր գործիքները չեն, այլ և նրանք թէ՛ ամենաճշգրտէն գործադրողներն են այդ իշխանութեան բոլոր վայրագութիւնների և թէ՛, մանաւանդ, իրանք էին և են զանազան հրէշային ծրագիրներ ներկայացնում «բարձրագոյն» իշխանութեան և վաւերացումն ինչպէս: Իսկ այսպիսի ծրագիրների վաւերացումը չէր և չի մերժում, որովհետև պետութեան գործերի ղեկը իսկապէս Պլեէներին ձեռքումն էր և է:

Պլեէի և նմանների ներքին քաղաքականութեան աչքի ընկնող գծերից մէկն էլ կազմում է ծայրերի քաղաքականութիւնը Ռուսաստանի ներքին

կեանքում, մի քաղաքականութիւն, որ պաշտպանւած է նաև ուս բուրժուազական մտմուլի կողմից:— Մի առանձին քննող հողացողութեամբ քաղաքական այս գործիչները, բուրժուազիայի բնուր թեթեւացնելու համար, եկան այն համոզման, որ պէտք է երկրի ծայրերի վրայ աւելացնել տուրքերի նոր և որոշ քանակութիւն՝ կենտրոնը — առանձնապէս մայրաքաղաքները և մեծ քաղաքներն ազատելու համար մեծամեծ հասարակական ծախսերից: Եւ այս քաղաքականութիւնը անտեսապէս աւելի ևս քայքայում է ծայրերը, ուր ազգաբնակչութիւններն առանձնապէս կազմւած են ոչ—ռուսներից, որոնց սակայն պէտք է ուսացնել— մ ու ժ ի կ դարձնել, ըստ արամաքանութեան ցարիզմի:

Եւ այժմ իրբէք զարմանալի չի, որ խոնարհ ֆինլանդացու ծոցից դուրս է թռչում մի բուրժուա, մի միապետական տերրորիտ ու գնդակահարում Բօբրեկօփի նման մի հրէշի: Տերրորիտի դիրքը ամենալաւ կերպով ապացուցանում է այն սարսափելի և անտանելի դրութիւնը, որի մէջ գտնւում է ֆինլանդացին, և որը այդ տերրորով ոտք է գնում Ռուսաստանում՝ սկսած յեղափոխական կռւի մէջ ընդդէմ ցարիզմի:

Նա իր սարսափելի դրութեամբ վիճակակից հային, հրէային, լեհին՝ այսօր դառնում է նաև սրանց գործակիցը յեղափոխական ասպարէզում:

Եւ այս անխուսափելի էր:

**ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱՌԻԹՈՎ**

Ուղիղ վեց ձիգ ամիսներ անցան այն օրից, երբ Ծայրագոյն Արևելքի Ղեհապետը՝ այլ ևս անկարելի համարելով տանելու Ռուս կառավարութեան ստրնձութիւնները, դիպրոմատիական յարաբերութիւնները խղեց Ռուս բռնակալի հետ և պատերազմ հըրատարակեց նրան:

Ամբողջ քաղաքակիրթ աշխարհը պահ մի ապուշ կտրեց: Սրտատրոփ և երկմտութեամբ նայում էին սկսուած դրամայի վախճանին: Եպպոնական պետութեան խիզախութիւնը զարմացրել էր բոլորին . . . 160 միլիոն հպատակ ունեցող բռնապետի և քառասպատիկ Ղուաղ ժողովրդի իշխանաւորի արտասովոր մրցումն . . . իսկ որ զարմանալի էր: Ռուսական «հըսկան», հիւսիսային արջը այնպիսի կախարդական ազդեցութիւն էր թողել դարերի ընթացքում եւրոպական մեծ և փոքր պետութիւնների վրայ, որ ոչ որի մտքովն անգամ չէր կարող անցնել, թէ հեռուոր Ասիայից հրացանով ու թնդանութով զրահաւորուած

մի Գաւիթ դուրս կը գայ մի լպիրշ և անպատկառ Գողիթի դէմ, որը նոյնպէս հրապարակ է եկել հայ, ռուս, թուրք և հարիւրաւոր ճնշուած ազգութիւնների արիւնով և արտասուքներով թրձած իւր պղնձածոյլ հրանօթներով . . .

Ռուս շովինիստ մամուլը, Սուլտրինի և սրա նման ապականուած հոգու ու մտքի տէր անձանց ժահրալից գրիչները ինչ ասես, որ չասացին եռպոնսական վեհանձն և քաջ ժողովրդի դէմ: Էլ ծագր ու ծայրայեղ ամբարտաւանութեամբ և անսովորութեամբ յերկրուած նողկանքներ ասես, որ չթափուեցան մտաւոր պոռնիկների գրչի տակից քաղաքակրթութեան ասպարիզում իսկապէս հրաշքներ գործող Եսպանական ժողովրդի դէմ: Այդ բաւական չէ: Յետամնաց, ասիացի, վայրենի և բարբարոս հուշակեց այն հիացման ու սքանչանքի արժանի ժողովուրդը, որ 40 տարւայ ընթացքում աւելի շատ էր յառաջագիւժել և ընդհանուր մարդկութեան ու քաղաքակրթութեան օգուտ տուել, քան թէ Ռուս բռնապետութիւնը դարերի ընթացքում: Խաղաղար է Կուրուպատկինի համար, որ ջարդուփշուր անելով Մարշալ Կոնտին՝ իր ամբողջ զօրբանակներով կամ ծովը կը թափէ և կամ գերի կը վերցնէ ու նուաստացուցիչ պայմաններով խաղաղութեան դաշն կը կնքէ Տոկիոյում . . . :

Վեց ամիս անցել է և, սակայն, Ռուսաստանի հարիւրաւոր ժողովուրդները ճիշտ գաղափար չունին պատերազմի մասին: Սկսած Ալեքսիեից, Կուրուպատկինից և վերջացած վերջին գեներալով, բոլորը, բոլորը շնական լկտիութեամբ թագցնում են իրողութիւնները, իրենց խայտառակ պարտութիւնները «ուղմագիտական խորը խորհրդածութեամբ նահանջում» անուանելով: Այն Եսպանացիք են, որ ջարդուփշուր են լինում, դիտապատ գետին են գլորում ամբողջ աշխարհը իրենց հուշակով զըղդեցնող կազակների անշեղ հարուածների տակ: Տիւրքնէլի, Կինչուուի, Տէլիսոի արտասովոր և խայտառակ պարտութիւնները ռուս գեներալների պարտութիւնները չեն, այլ «ամենակարող և հանձարեղ» Կուրուպատկինի ռազմագիտական խորախորհուրդ ծրագիրներ, որոնք մեղ հասարակ մահկանացուներիս հասկանալի չեն — որպէս զի յետոյ յանկարծակի գրոհ տայ և ծուղակում ջախջախէ «յանդուգն հեթանոսին» . . . : Կեմիրովիչ — Դանչենկոյի նման գրողն էլ պնակալէզ, հացկատակ ու կաշառուած գրիչների օրինակին հետեւեց, Եսպանացուց Եսլու անցնելուն պէս պէս հեռագրելով, թէ իր և Կուրուպատկինի ցնծութեան չափ ու սահման չկայ. «կօսէ», վասըն զի թշնամին ինքն իր ոտով ծուղակի մէջ է ընկնում:

Ինչ է իրականութիւնը, սակայն: Յարգ, ի խայտառակութիւն ռուս ամբողջ զօրբանակների, մի աննըշան, գէթ հարիւր-երկու հարիւր զինւորից բաղւցած վաշտով յաղթութիւն չկարողացաւ տանել մեծ

ապրումով Մանջուրիա արշաւող Կուրուպատկինը . . . :

Աչքները թաթարների, պարսիկների, տաճիկների ու թիւրքմէնների էր տեսել: Հայոց կեղեցիկները ուրբակոծել գիտեն քաջաբար Կիկոյա II-ի հրաշալի զինւորները, որոնք ինչքան էլ ջարդուփշուր լինին, այնուամենայնիւ շնորհիւ Կաղանի Աստուածամօր Պատկերի՝ «գերազանց» տրամադրութիւն են ցոյց տալիս: Ամբողջ աշխարհը նեարդային հետաքրքրութեամբ նայում է սկսուած արտասովոր մենամարտութեան:

Սուլթան Համիտի մտերիմ բարեկամ Վիլհէլմ կայսրը սոսկումով նայում է եսպանական յաղթանակ գնացքին, թնդագին աղաղակներին և ատամները կրծքտացնում. . . . Իր ապագայ անպարտելի նաւատորմը հապա . . . 2է որ ծովի վեհապետուհին է գառնալու գերմանիան: Հապա եթէ մի օր էլ իր վզին զարկելով դուրս վնտեն Կիւչուուից . . . : Ամբողջ աշխարհը և ռուսական քստմելի կառավարութեան, ցարիզմի ճիրաններում հեծեծող միլիոնաւոր ժողովուրդները շնչասպառ, նեարդային գալարումներով սպասում են սկսուած՝ թէ և գոբախտ, բայց միւս կողմից երանաւետ յոյսեր ներշնչող պատերազմի վախճանին, եթէ այդ պատերազմը պիտի ջախջախէ ցարիզմի խարխուլ գահը, մերկապարտնոց հրապարակ հանէ ռուս արքունիքի անկիւններում կատարուող անբարոյականութիւնները, ցոփութիւնները, ինչպէս մի ժամանակ Կապուէն III-ի ջարդուփշուր գահի շեղ բարձրացու հասարակապետական աթոռը, որով, ինչքան էլ չլինի, կարող է պարծենալ արդի Ֆրանսիան:

Ապասուում էր թէ ռուս յեղափոխականները ամենարարեյաջող առիթ գտնելով ներկայ պատերազմը՝ ճիգ և ջանք պիտի թափէին, թուլացնելու միլիոնաւոր ժողովուրդների արիւնը ծծող, կողոպտող և կեղեքող աւաղակների ուժը և կարողութիւնը: Ապասուում էր թէ ռուս բանւորը, մուժիկ-գիւղացին, որ անցեալ տարիների ընթացքում հերոսութեան, գիտակցութեան այնքան գովելի օրինակներ և պերճախօս ապացոյցներ էր տուել իր բռնաբարուած իրաւունքները պաշտպանելու սրբազան պայքարի մէջ, երբ նա արիւնով ներկում էր Ռուստովի, Բագուի, Թիֆլիսի ու այլ քաղաքների սալախատակները, ապասուում էր, առում ենք, թէ այդ ժողովուրդը իր կոշտացած ձեռքերով, կուսնը կը բարձրացնէր իր կեղեքողն, անհաշտ բռնաւորի դէմ, սակայն, ցաւով և հիասթափութեամբ ստիպուած ենք արձանագրելու, որ ցարիզմի այս դոնքիշտական ամենախայտառակ արշաւանքի դէմ՝ զարդ չկարողացաւ, աւելի ճիշտն ասած՝ չկամեցաւ բողբել՝ եսպանական անվեհեր զինւորներին իր դաշնակիցը ունենալով: Ոչ միայն չարեց, այլ և որպէս հաղորդում է ռուս յեղափ. մի օրգան (P. P.), Բագուի բանւորները՝ հայրենասիրական յանկարծական ակտով բռնուած՝ որոշել են լուել, թող տալ, որ Կիկոյայոս II-ը շարունակէ իր արշաւանքներն ու ոճիր-

ները: Իսկ եթէ հայերը կը յանդգնեն ցոյց անելու, ջարդուփշուր կանեն նրանց կողերը, յայտարարել են նոյն բաները, որոնց հերոսական ջանքերի մասին այնքան գրուել է «Հնչակ»ի էջերում: Եթէ ճիշտ են այս յայտարարութիւնները, այն ժամանակ դառնացած սրտով պիտի բացականչել՝ ամսոս այնքան թափուած արիւնը:

U. S.

### ԿՈՏՈՐԱԾԻՆ ՎԵՐՋԸ

#### ԱՆԳԼԻԱՆ ԿԸ ԳՈՐԾԷ ? ! !

#### ԼՕՐՏ ԼԷՆՍՏՕՎՆԻ ՆԱՄԱԿԸ

Անկո-Հայկական Ընկերութեան նախագահ պր. Սթիվընսըն, Արտաքին գործոց քարտուղարէն ստացած է Յունիս 28 Թևակիր հետևեալ նամակը:

Պարոն.— Ի պատասխան ձեր՝ ներկայ ամսւոյ 21 Թևակիր նամակի, Մարքիզ Լէնստօվի կողմէն հրահանգած եմ տեղեկացնելու ձեզ, որ Նորին Կայսերական Վեհափառութեան Կ. Պոլսոյ դեսպանը Յնս. 14 Թևակիր պաշտօնագրով մը կը հաղորդէ թէ՛ անցեալ օր մեծ եպարքոսի հետ տեսակցութիւն մը ունեցած է, որի մէջ մասնացոյց ըրած է նորին վսեմութեան այն պատասխանատուութիւնը, որուն պիտի ենթարկուի Օսմանեան կառավարութիւնը, եթէ ստուգուի, որ քիւրտերը մասնակցութիւն ունեցած են հայերու վերջին կոտորածի ժամանակ: Միևնոյն ատեն յորդոր կարգաց մեծ եպարքոսին, որ կայսերական կառավարութիւնը պէտք է պարզօրէն ցոյց տայ թէ՛ ինքը հաւանութիւն չունի այս տեսակ ապօրինի գործողութիւններու, և թէ՛ վճռած է զսպել զանոնք:

Սըր Նիքօլա Օ'քօնօր նաև ուշադրութիւնը հըրաւիրեց թիւրք իշխանութեանց վերագրեալ այն ծրարագրի մասին, որու համեմատ հայերը վար առնելով իրենց լեռնային տուններէն, բունի կերպով պիտի բռնակեցնեն դաշտերը և ստիպեց նոյնպէս նորին վսեմութիւնը, որ անմիջապէս հրամաններ ուղարկէ վալիին թոյլ տալու այն ամեն փախստականներուն, որոնք կը փախաքին իրենց տունները վերագառնալ, պաշտպանելով զանոնք միանգամայն քիւրտերու կողմէն լինելիք հաւանական յարձակումներէն:

Մեծ եպարքոսը համաձայնեց անմիջապէս կատարել զայն, և Սըր Նիքօլա Օ'քօնօրի ներկայութեանը այս մտքով հեռագիր մը ղրկեց Պիթլիսի վալի-

ին, աւելացնելով թէ՛ եթէ փախստականներէն ուէ մէկը կը նախընտրէ Մշոյ դաշտը մնալ, անոնք ալ հաւասարապէս պէտք է պաշտպանեն:

Պարոն-Տիւպատոս Պր. Հէթթօթին իմաց տրւած է այս հեռագրի ղրկելու մասին, և հրահանգած է տեղեկացնելու թէ՛ այս հրամանները ինչ տեսակ կը գործադրուին: Կարգադրութիւն եղած է նաև, Օսմանեան կառավարութեան համաձայնութեամբ, որ Նորին Կայսերական Վեհափառութեան Վանայ դեր-Տիւպատոսը ընկերանայ ուէ թիւրք զօրքերուն հետ, որոնք դեռ ևս ապստամբներու դէմ կը շարունակեն իրենց զինուորական գործողութիւնները, և քափթէն թիրէլը այդ նպատակաւ Յնս. 19-ին Մուշ հասած է:

Մնամ Լին:

Թ. Հ. ՍԷՆՏԸՐՍԸՆ

Կ. Պոլսոյ Անգլ. դեսպանի և Մեծ եպարքոսի միջև փոխանակուած այս խօսակցութիւնը, որուն այնքան կարևորութիւն տւած է ոչ միայն անգլ. դիւրահաւան մամուլը, այլ և նոյնպէս Արտաքին գործոց Նախարարը, կուգայ անգամ մը ևս ցոյց տալ Եւրոպայի բարոյապէս փտտած դիւանագէտներու վրայ յոյս դնող մեր «խելօք դիպլոմատներուն» թէ՛ Եւրոպա ինչ աչքով կը նայի արիւնոտ Հայաստանի կացութեան վրայ: Քիւրտերու պատմական դարձած վայրագութիւնը, որուն վրայ Լէնկթիմուրներ, Ճինկիզխաններ պիտի նախանձէին, դեռ չեն կրցած Անգլիական դեսպանի ուշադրութիւնը գրաւել, որ տղայական միամտութեամբ հարցուցած է Մեծ եպարքոսին թէ՛ դիւրտերը մասնակցութիւն ունեցած են վերջին կոտորածի ժամանակ»: Աւելին. դեսպանը եղբայրաբար յորդոր կարգացեր է մեծ վէզիրին թէ՛ կառավարութիւնը ցուցնելու է, որ ինքը այդ տեսակ ապօրինի գործողութիւններու հաւանութիւն չունի»: Խեղճ դիւանագէտ: Հարիւր հազարաւոր անմեղներու արիւնը խրմելէն վերջը, Պիղատոսի նման ձեռքերը լալով դեսպանը գործերուն մէջ բաժին չունիմ» ըսող Համիտը այդքան ապուշ պիտի ըլլայ, որ այսօր ելլայ խոստովանի, թէ՛ ինքը հաւանութիւն ունի:

Օ'քօնօր, իրենց տունները վերագարձող հայերու համար թիւրք կառավարութեան պաշտպանութիւնը խնդրած է: Այս ալ ոչխարներու վրայ գայլերը հովիւ կարգելու կը նմանի: Մեծ եպարքոսը՝ ըստ թըրքական շողքորթութեան՝ գլուխ կը ծռէ դեսպանի բոլոր ըսածներուն և ինքզինքը Օ'քօնօրի հետ համակարծիք ըլլալ ձևացնելով՝ մեծ փութկոտութեամբ, որուն վրայ Անգլ. դեսպանը իրաւունք ունէր հիանալու, կը հեռագրէ Պիթլիսի վալիին խելոյն և եթ միջոցներ ձեռք առնել հայերը պաշտպանելու քիւրտերու դէմ: Թիւրքերու այդ դիւանագիտական աչքակապութիւնը նոր բան չէ, նա այնքան հին է, որքան հին է անոնց ծագումը: Թիւրքերու յաւիտենական

«Եվ վերջին ֆենտիմ»-ի խարտուղիան ինչ միլիոնաւոր անձինք զոհուած են: Անմահ Ներսէս պատրիարք շատ իրաւամբ ըսած է թէ՛ «այս խարտուղի կառավարութիւնը՝ «Եվ վերջին ֆենտիմ»-էն զատ ուրիշ բան չի գիտեր», «Եվ վերջին» կըսէ, սակայն ոչինչ չընէր»:

( ) Բոնօրներ գեռ շատ կրնան խորհուրտութեաններու այդ մայրաքաղաքին մէջ, որը՝ Սըր Ֆիլիպի Բըրիի ըսածին պէս եղած է միշտ «Յուսախարութեանց Երկիրը»:

**ՀԱՅՐԵՆԻՔԻ ԿԱՅՈՒԹԻՒՆԸ**

«Տէլլի Մէլլ»-ի Փարիզի թղթակիցը կը հեռագրէ թէ՛ հետեւեալ տեղեկութիւնը ստացած է ա՛յնպիսի ազբիրէ մը, որուն հաւաստութիւնը անվիճելի է:—

Գրքերը, Արնիստ, Խարո, Մկնագոմ և քանի մի այլ գիւղեր աւարի և հրդեհի են ենթարկւած, բնակիչները մեծ մասամբ կոտորւած և զիւրիսին նետած ջրհորները կամ Մուրատ ջուրը:

Մկնագոմ կողոպտած են քիւրտերը, որոնց հետ միացած են նաև թիւրք զինուորները: Եկեղեցիին թալնւած, սրբապղծւած և պաշտամունքի քառակաները աճուրդով ծախւած: Այս գորագոյ գիւղին մէջ ամեն հուճկու մարդ գաշունահար եղած է, մեծ մասամբ ետակէն:

Թիւրք զինուորները զիւր առան կը մանեն տունները և կը բռնաբարեն կիները: Անգլիական և Ֆրանսական հիւպատոսներու ժամանելուն՝ այս կիները, արինաշաղախ կը վազեն անոնց առջև և գթութիւն կը հայցեն:

Մուշր գրաւած է թիւրք զինուորներու կողմէն: Քանգուած գիւղերէն 2000-էն աւելի կանայք և մանկտիք ապաստանած են հոն: Այս բոլոր խեղճողորմելի ժողովուրդը անօթութենէն և վախէն կիսամեռ վիճակի մէջ կը թափառին փողոցները և կը ներկայացնեն գթաշարժ տեսարան մը:

Մտոյգ հաշի մը նայելով, որը հիմնւած է Անգլիական և Ֆրանսական հիւպատոսներու տեղն ու տեղը կատարած քննութեան վրայ, 28 գիւղեր քար ու քանդ եղած և 6000 հոգի կոտորւած են:

«Տէլլի Նիւզ»-ի թղթակցէն.— Կ. Պոլիս Յուլ. 1

Հայաստանի մէջ պատահած կոտորածը առաջ բերաւ իր բնական արդիւնքը:—Կրկին ծնունդ տուաւ հայկական կամիտէներու ակտիվ գործունէութեան:

Անգլիոյ մէջ պէտք է լիովին հասկցի, որ հայ ժողովրդի մեծ մասը կը դատապարտէ օպառնալիքներու զիմելը և կամ այդ օպառնալիքները Պանգ Օթթոմանի վրայ

եղած յարձակման նման եղանակով գործադրելը: Բայց այս շնչանակեր թէ՛ նոքա գոհ են ներկայ ըէժիմէն: Այդ տեսակ ալուկներ կըսին նպատարնալ վարձկան թերթերու կողմէն միայն: Հայերու ցանկութիւնն է իրենց կեանքը և ինչքը ապահովւած տեսնալ, և ոչ թէ իրենց ժողովուրդը տեսնալ տանջւած և բռնաբարւած: Նոքա կընդունին թէ՛ կայսրութեան ամեն նահանգի մէջ ալ թալ իրենք ըլլէ են, և որ՝ բունի միջոցներու զիմելը, նոյն իսկ ի պատասխան հրէշային բռնաբարութեանց առաջ պիտի բերէ ալ աւելի ճնշում:

Վերելի նկատողութիւնները կըլլան ի դէպ շրջաբերականի մը, զոր ստացած են մի քանի, և կա՛մ հաւանականաբար, բոլոր պետականները հայ Հնչակեան կոմիտէներու մէկուն կողմանէ, որոնք կօպանան մայրաքաղաքի խաղաղութիւնը վրոգովոյ միջոցներու զիմել, եթէ անմիջական կերպով աւելի ազգու միջոցներ ձեռք չառնին Հայաստանի մէջ կատարուող աւերումի և բռնաբարութեանց առաջը առնելու համար:

Արաբի թէ՛ հայերու թոյլութիւն եղած է վերադառնալու լեռները՝ որտեղէն, ինչպէս ձեր ընթերցողները գիտեն, դուրս քշւած էին քիւրտերու և թիւրքերու կողմանէ: Այս թոյլութիւնը գործնականապէս անօգուտ է, և սե՛ւէ հայ փախստական մը չի հաւատար թէ՛ այդ խոստումը պիտի յարգի, որը Մակեդոնացիներուն՝ իրենց տունները վերադառնալու համար տրւած խոստումն աւելի արժէք չունի:

Մեծ ջանք ի գործ կը դրն դուրս չհանելու համար ո՛ւրէ մանրամասնութիւն Հայաստանի մէջ վերջերս պատահածների վերաբերմամբ: Բայց, այժմ գաղտնապէս նամակներ կը հասնին, որոնք լոյս կը սփռեն կացութեան վրայ: Էրզրումէն Յնա. 11 թակիր նամակ մը կը յայտնէ, թէ ոչ ոքին թոյլ չի տրուի քաղաքէն և կամ Մշոյ շրջակայքէն դուրս ելլել, վախճալով որ՝ չըլլայ թէ իրենց տեսածները և լսածները պատմեն: Նամակագիրը կըսէ թէ, նոյն իսկ թիւրքերը, նախ քան շրջակայքէն մեկնելը, ստիպւած են թոյլ տրուութիւն ստանալու և երզում ընելու, որ ո՛չ ոքին չը պիտի յայտնեն թէ՛ ինչ տեսակ կը վարին քրիտոսնայ ժողովրդի հետ:

Չօրքերը դեռ ևս բանակած կը ծնան Սասնոյ լեռները: Մշոյ շրջակայքի գիւղերէն կողոպտած և այրած են Բերգակ, Մկնագոմ, Արնեստ, Ազգաբիր, Համատուրիկ գիւղերը, մինչ Տէրիկի մէջ Բիրտ ցեղապետ մը վեց հայեր կախեց ապստամբներ են ըսելով, և այրեց թէ՛ գիւղը և թէ՛ եկեղեցին, որու մէջ Ս. Իսահակի գերեզմանը ըլլալուն՝ մասնաւորապէս ներական համարւած էր: Նամակագիրը կը յայտնէ թէ՛ Վարդօ, Պոլանդ և Մայրակերտի մէջ գողութիւն և մարդասպանութիւն ամենօրեայ դէպքեր են: Էրզրումի մօտ ժողովուրդը կը գանգատի կամայական ձերբակալութիւններու և մանաւանդ այն տանջանքներու դէմ, որոնց կենթարկին անոնք, հասկնալու համար թէ՛ յեղափոխականներու հետ համակրողներ կան:

Ազարդ թագաւորի հպատակներուն ինչքան ալ անհաւանական երևին այս պատմութիւնները, սակայն, թիւրք կառավարութեան մեթոտներու հետ ծանօթ ե. զողներուն անհաւանական չեն թւիր: Ինչպէս երևի, Էրզրումի մէջ հիպատոսները հակառակած են կամայական ձերբակալութեանց և տանջանքներու դէմ, և անոնց դիտողութիւնները օգտակար եղած են, բայց միմիայն քաղաքի վերաբերմամբ: Սաանոյ մէջ կատարւած սպանութեանց ցուցակ մը տեսայ, որը կը ցուցնէ թէ՛ թիւրք խումանը ազատ թողած է ժողովուրդի վրայ:

Կամակազիրը կը յայտնէ թէ՛ հայկական խմբերու մասին տարածւած լուրերը սուտ են, և թէ՛ մի քանի հոգիներու ներկայութիւնէն օգտւած են քրիստոնեայ ժողովուրդը կողպտելու: Այս լուրերը տարածւած են նաև Վանայ կողմերը, որոնք նոյնպէս անհիմն են և պատրակ քրիստոնեաներու վրայ յարձակման:

Վիւրտերու և թիւրքերու ձեռքէն փախչելով Սասուն ապաստանած կանանց և տղայոց թիւը կը հասնի 3000-ի: Կառավարութիւնը 24 ժամը անգամ մը հաց կը բաժնէր անոնց, որը թէ՛ քանակով քիչ և թէ՛ սրակով վատ էր: Յնս. 4-էն սկսեալ այդ ալ կտրւած է: Վատ և անբաւական սնունդ, վէրք և հիւանդութիւն, ահն օր կը մահացնեն բազմաթիւ մարդիկ:

Վան միայն 200 հոգիներ, որոնք կառավարութեան շնորհած ներումը ընդունած են և կստանան ողջ մնալու չափ կերակուր: Հարիւրաւորներ սակայն, թիւրքերու տւած խոստման հաւատք չընծայելով պահւած կը մնան լեռները: Թիւրքերը յատուկ յանձնախումբ մը կազմած են, որու պաշտօնն է ամբողջ քրիստոնեայ ժողովուրդը զինաթափ ընել: Պիթիւսի ժանդարմերիայի օֆիսէրներէն Իզզէթ պէյ անունով մէկը, հարիւր հոգիով բաղկացեալ խումբի մը ղրախը անցնելով, Մշոյ շրջակայքի դիւղերը կը շրջի վերցնելու համար ամեն մի առարկայ, նոյն իսկ ամենահասարակ դանակ մը, որ կրնայ գործածուիլ ինքնապաշտպանութեան համար: Միւս կողմանէ թիւրք ժողովուրդը կանոնաւորապէս և սխթեմաթիկ կերպով կը զինւի:

Մայիս 31-ին Իզզէթը իր խուզարկութիւնը ըսկըսեր է Կարսի մէջ, ձերբակալելով քահանան և 3 քրիստոնեայ երեւելիներ, որոնց ամենն ալ այնքան ծեծեր են, որ հարւածներու տակ մարած են:

Վոյժուէլը և իր մարդիկը իբր թէ իբեհնց փնտռած զէնքերը շփոթելով, զբաւած են ամեն ինչ որ արժէքաւոր գտած են և այս ալ այն պատճառաբանութեամբ թէ՛ հայերը զանոնք ծախելով զէնք կրնան գնել: Իզզէթը իր անցած ամեն գիւղի մէջ տանջանաց և արտասովոր անգթութեանց նշանը թողուցած է:

Տասը տարի առաջայ կոտորածի մէջ նշանաւոր պարձած Շէյխ մը, որ իր հրամանի ներքե 5000 մարդիկ ունի, Մուշ հասած և վալիի հետ տեսակցութիւն մը ունեցած է: Կը վախցի թէ՛ Սասնոյ այն հօգերը, որտեղէն հայերը արտաքսած են, այս շէյխի

պիտի տրին իբր վարձատրութիւն իր մատուցած ծառայութեանց: Նախակը կը յայտնէ այն զիւղացի կանանց մասին, որոնք Զորօի մէջ խեղդւած են թիւրք զինուորներու ձեռքը շինալու համար: Աւարի ենթարկւած պիտաները կը ծախին, ժողովուրդը անտէր, անօթի և թափառական ենթարկւած է անհանգուրժելի տանջանաց:

Մի խօսքով— Հայաստանը անգամ մը ևս կոչ կընէ Եւրօպային: Այս խնդրով հետաքրքրուող զեսպանները զիտեն իրականութիւնը և կափսոսան կատարուող անցքերը: Մեր զեսպանը նորանոր խռովութեանց առաջը առնելու համար իր փափաքին մէջ ուրիշներէն անշուշտ հտ չի մնար, սակայն, ինքը և իր պաշտօնակիցները հրահանգ ստացած են բաւականանալ միմիայն իրականութիւնը հասկնալով և բողոքելով:

Իհարէ, որ պիտի դպրեցնէ այս առեւանգումը, կողոպուտը և բռնաբարումը, զեռ չէ արտասանւած:

Ֆրանսան, որ պարտքի մը վճարման համար Միտիլինը զբաւեց այդու թիւրքիան խելքի բերելու համար ազդեցիկ միջոցը ցոյց տուա: Ներկայ բանակցութեանց մեթօտը վտանգաւոր է, որը միայն կը յանդի թուրքին ըսելու թէ՛ ինչ պէտք է և ինչ չպէտք է ընէ:

Կը համարձակիմ յիշեցնելու որ այս մեթօտները ապարդիւն եղած են, այժմ պէտք է ճիշտ մեթօտը գործածել: Թիւրքը երկրի տիրոջն է, աւելի պարզ և աւելի ազդեցիկ կըլլար, եթէ իրեն յայտարարէր թէ՛ յոռի կառավարութեան համար ինքը պատասխանատու պիտի բռնի, քան բարեկամական խրատներ տալ: Թէ որ Եւրօպան ըսէ թէ՛ երբ կոտորածներ ըսկսին կառավարութիւնը պատասխանատու պիտի բռնի, թիւրքը կարող է զանոնք արգիլել: Միայն և միմիայն այս ուղղութեան մէջ կը կայանայ փրկութիւնը:

**ՊԼԷՎԷՆ ՍՊԱՆԻԱԾ**

**ԱՅ ՈՒ ՍՍԵՍԵՓ Ս. ՊԵՏԵՆՐՈՒՐԻՒ ՄԷՋ**

Վանձակի փոխ-նահանգապետ Անտրէլը հայ կըտրիճի գնդակներուն տակ զլտապատ ըլլալէն յետոյ, այսօր յեղափոխականի արդար դատաւարանը՝ արդար հատուցումն կուտայ նաև հրէշ Պլէվէին — ամբողջ Ռուսաստանի այդ ամենաանխիղճ և քարասիրտ դահճապետին, որը 1902-ին Սիպլալինի սպանութենէն յետոյ Ռուսիոյ ներքին գործոց նախարարութեան ղեկը ստանձնելով՝ փոխանակ իր նախորդի ստացած պատիժէն խլբատուելու՝ ընդհակառակը, անպատմելի խստութեամբ շարունակեց նորա և յետադիմակաւ Ալէքսանդր Գ-ի քաղաքականութիւնը, միշտ արհամարհելով յեղափոխականները թէ՛ նոքա ոչ մի ոյժ չեն ներկայացներ՝

թէ՛ յիմ ոստիկաններս լաւ են կազմակերպւած, յեզափոխականները ծանօթ են և կը հսկին: Այո՛, Պլէվէն արհամարհեց յեզափոխական ոյժը, որ այսօր անգամ մը ևս երեան կուգայ պատժելու բանապետները՝ ահ ու սարօափի ենթարկելով զանոնք:

Պլէվէի մահը ոչ ոքին ոչ մի զարմանք չպատճառեց: Ամբողջ աշխարհ կապասէր այդ տեսակ վախճանի մը: Ուրիշ կերպ ալ չէր կարելի: Մարդը՝ որ թեղադրեց քիչինկի կոտորածը, որ վտարեց Ֆինլանդացիները, մարդը՝ որ օրը ցերեկով աւազակաբար կողոպտեց հայ եկեղեցական կալածները, որ իր գործունէութեան ամբողջ ընթացքին մէջ դահճագետի սառնարտութեամբ ճնշեց, խեղդեց ամեն ազատ միտք և ըզզացմունք, մարդը՝ որ անընդհատ տանջեց լեհացիները, անգլիաբար բանտը, կախաղանի և աքսորի ենթարկեց ժողովրդի շահերուն նւիրած՝ հազարաւոր ամենափայլուն մտքի տէր անձնաւորութիւններ, չէր կրնար ոպասել, որ հանգիստ մահով պիտի մեռնէր, չէր կրնար սպասել, որ այդ ճնշւած ժողովրդի մէջէն չպիտի ելլէր մէկը տալու իրեն՝ իր արժանի պատիժը: Այսօր ամբողջ քաղաքակիրթ աշխարհը կը հրճի Պլէվէի մահամբ, կը հրճի նաև Ռուսաստանի միլիոնաւոր ժողովուրդը — առանց ցեղի և կրօնքի խտրութեան — որոնց ամենասրբազան և անբռնաբարելի իրաւունքները և սրբութիւնները ոտքի տակ առաւ, արհամարհեց, օրբապղծեց և . . .

Այստեղ աւելորդ չենք համարեր մէջ բերելու զէպրի համառօտ նկարագրութիւնը և Եւրօպական նշանաւոր թերթերու կարծիքները:

**Դ Ե Պ Բ Ը**

Ս. ՊԵՏԵՐՔՈՒՐԳ, 28 Յուլիս

Պլէվէն, ըստ սովորութեան կը գնար Պալթիկ երկաթուղւոյ կայարանը, որտեղէն և պէտք է գնար Պէտերհօֆ, ցարի հետ տեսակցելու:

Այլարշավ կայարանին մօտ կը գտնուի վարչավօթեւր, այստեղ սովորաբար կառապանը կամաց կը քնչէր կառքը: Օդը շատ տաք ըլլալուն, բնականաբար, օթելի պատուհանները բաց էին: Ժողովուրդը, որ այն կողմը միշտ մեծ բազմութեամբ կը գտնուէր, այն օրը սակաւթիւ էր: Երբ Պլէվէի կառքը անցաւ օթելի առջևէն, կայարանին մօտէն ինքնաշարժ մեքենայ մը կը մօտենայ, որուն մէջ նստած էին երկու հոգի, որոնցմէ մին հագած էր ճանապարհներու և հաղորդակցութեան նախարարութեան պաշտօնեայի հագուստ: Այս վայրկենին օթելի պատուհանէն մարդ մը Պլէվէի վրայ ուժմբ մը կը նետէ, միևնոյն ժամանակ, ինքնաշարժ մեքենայի մէջ գտնուող մարդն ալ ուժմբ մը կը նետէ: Ռեմբաճգութեան հանած տղամուկի վրայ ոստիկանները կը վազեն և կսկօին ձեռքակալութիւններ ընել: Տէրբօրիտը թէև կաշխատի ատրճանակով անձնասպան ըլլալ, սակայն գաղտնի ոստիկան մը ետևէն զինք բռնելով

զետին կը նետէ, մինչև որ ուրիշ ոստիկաններ օգնութեան հասնելով ինք բանտը կառաջնորդեն:

Բժիշկներու համար ակնթարթի մը մէջ շատ պարզ եղաւ, որ Պլէվէն ազատել մարդկային ոյժէն վեր էր, մարմինը, անձանաչելի կերպով հաշմած էր, որոյ կրտսերները ժողովելով կը տանին մօտակայ օթեւր:

Այս լուրը կայծակի արագութեամբ կը տարածուի և ահ ու սարօափի մէջ կը ձգէ ամբողջ Պետերբուրգը:

**ԵՒՐՕՊԱԿԱՆ ԹԵՐԹԵՐՈՒ ԿԱՐԾԻՔՆԵՐԸ**

Ռուսաստանի մէջ ներկայ ընթիմի տակ չկայ ուէ ելք կամ միջոց: Հոն չկայ օրէնք մը կամ արդարութիւն մը, որը չկրնայ հեշտութեամբ մէկ կողմ շարտել վարչական հրամանով մը: Պլէվէն, անկասկած, հաստատապէս համոզւած էր թէ իրերի այս դրութիւնը բընական է և ճիշդ: Յամենայն դէպս, նա բնականաբար թէօրիան և պրակտիկան յառաջ տարաւ մինչ այն աստիճան, որ նոյն իսկ Ռուսաստանի մէջ ապօրինի երևաց: Նա փակեց ամեն ամեն ծորակ, պտուտակեց ամեն կափօյր, և վերջապէս աշխարհք կը լսէ առանց զարմանալու թէ, կաթօան պայթեր է: Times

Պլէվէն լեհերուն, Ֆինլանդացիներուն և հայերուն համար պատուհաս և կզղեքիչ մ'էր և վառտակեց անոնց ատելութիւնը այն պաղարին ատելութեան համար, սրով հետամուտ եղած էր իտէալի մը, որը հաշի շահներ ոչ անոնց իրաւունքը և ոչ ալ փայփայած զգացումները: Morning Post

Շատ քիչերը կրնան ժխտել որ, եթէ կար մարդ մը, որուն համար այսպիսի վախճան մը բանաստեղծական արդարութիւն մ'էր, այդ մարդը Պլէվէն էր: Պլէվէի մասին անկարելի է ուրիշ բան մը ըսել բացի այն, որ նա աշխատեցաւ: ամենազգուշի կերպով յառաջ տանիլ զգուշի քաղաքականութիւն մը: Morning Leader

Պլէվէն իշխեց երկաթի ձեռքով: Հրէաներուն հետ իր վարմունքը չէ կարելի ուէ կերպով արդարացնել: Նա հաւատացած էր միմիայն կոշտ խտրութեան քաղաքակա-նութեան մէջ և ամեն ջանք ի գօրծ դրաւ կարելու յառաջդիմութեան ոգին, ամենուրեք որ այդ երևան կուգար: Daily Express

Իբր արդիւնք Պլէվէի մարմնացուցած ամենամայլ ճնշման քաղաքականութեան, վարչական մարմնոյն մէջ չկայ կէտ մը, որ մատղ վրտն զնելով (բնա՛ւ ըսել թէ — այս տեղը ողջ է: Daily Telegraph

Հակառակ այսպիսի արարքի մը զգուշութեան, միևնոյնաբար մարդիկ պիտի ընդունին այս իբրև ամենա-արդար գօրծ: Berliner Tageblatt

Հրաշք պէտք էր համարել, եթէ Պլեյէն օպանելէն ճողպարէր: Պլեյէն արիւնը ղէժիմի փոփոխութիւն կը պահանջէ ա՛յնպէս, ինչպէս կոյր կամայական քաղաքականութեան հարիւրաւոր զոհերու արիւնը:

Vossische Zeitung

**ՎԵՐՋԻՆ ՊԱՀՈՒՆ**

Վերջին պահուս մեր սեպհական թղթակցից ըստացանք հետեւեալ լուրը:—

«Յունիաի 26-ին առաւօտեան Հնչակեան X զինատար խուժըը Բայազետի շրջանում մի ընդհարում է ունեցել բազմաթիւ զինեալ քրդերի հետ: Մինչդեռ խուժըն իր սրբազան պարտականութեան գիտակից՝ առաջ է ընթանում դէպի հայրենիքի խորքը, յանկարծ շրջապատուում է իրենից թուով մի բանի տանեակ անգամ աւելի զինեալ քրդերով: Լուսաբացին սկսուում է կռիւը, որի միջոցին մեր բաջիրը, շքնորհիւ երենց անառիկ և ապահով դիրքի՝ առանց որ և է կորուստ ունենալու՝ փառաւոր ջարդ են տալիս թշնամուն, որը կէսօրին խառն ի խուռը և վայրենի անկարգութեամբ փախչում է, կուրի ասպարէզը թողնելով մեր բաջիրին: Այնուհետև Հնչակեան յաղթական խուժըը՝ մինչև երեկոյ հանգիստ առնելով՝ շարունակում է իր ճանապարհը դէպի \* \* \* »:

**Ն Ի Ի Ր Ա Տ Ի Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր**

Կուսակցութեանս ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ գանձարանում ստացել են հետեւեալ գումարները.—

ՄՈՒՐԱՐ	Մ—նից	- - - - -	300 ր.
ԺՆՍՏՈՏ	"	- - - - -	147 ր 2 և.
ՊՐԱՅԼԱՅԻ	"	- - - - -	148 Ֆ.
Պր. Պ. Սարգսեանից	- - - - -	- - - - -	100 Ֆ.
Պր. Օ. Գապարեանից	- - - - -	- - - - -	1 անգ. ոս.

**ԴԻՆԻՍ Մ-ՂԻ ԳԱՆՃԱՐԱՆՈՒՄ ՍՏԱՅԵԼ ԿՆ.—**

Նիւրնբեր.— Ըզրայէ, Հայրենիք, Սիրելի-Դաշոյն, Չէյթուն Փայլակ, Արեգակ, Շոգեմու 5-կն րուք., Գիւլպիւ, Ազգասէր Եղիշը 3-կն ր, Պաշտօն, Արտ, Կարիճ, Չլօ, Գարեգին 2-կն ր Լուսապայծառ, Լուսատու, Ամա, Վառօղ, 1 ր 50-կն և, Հայկ, Արե, Մամուէլ, Բաշ Սուրէն, Ջէյրան, Վահէ, Փրկիչ, Վիշապ Կարիճ, Վիշապ, Լուսին, Ամենաբնիկ, Նապաստակ, Կայծակ Ալան, Սուր, Սիրայ, Գաննիկ, Անեքիւղթ, Սաղաթել, Կայէն, Գարամի, Վրացի, Դել, Աթիկ, Աղիւսակ, Թոշիկ, Կարմիր Դել, Անդորրան, Փոխրա, Գաղափար, Վազգէն, Կէլիկ, Հայկիկ, Ոսկի, Շմաւօն, Որսորդ, Մամուէլ 1-կն ր, Ժառագայթ, Շահէն, Զամ Կարիճ, Գնդակ, Մասիս, Անյայտ, Սուրէն, Երկաթ, Սէլի, Շահ-պազ, Փաշայ, Ալան, Կրակ, Ժամացոյց, Գայլ, Երկաթ, Լոյս, Երկար, Շահապազ, Ճապօն, Մահ, Փիլ, Անիւծ, Աչք, Բաշապիրտ, Լոյս, Կարանաշ, Եղեմիկ, Կարիճ, Հայրենիք, Արդա, Բաշալի, Կրակ, Յաղթող, Արիւն, Գրաշ, Բարկէն, Հիւսիս, Նոր-

Դար, Պոսա, Մարգարիտ, Մատանի 50-կն և, Արամ Սուրէն-հանց 40 և, Ազրայ 30 և, Ժաղիկ, Ճիւղուկ, Զօպան, Խոնոր, Բուծայիս, Յուրտ, Գայլ, Աշտ, Չուկն, Բարիք, Փէղայի, Մուրճ, 25-կն և, Շապրա, Տանձ, Բարասիրտ, Մարուր, Մարգար, 20-կն և, ԱՊԱՌԱՅ Խ. Ազու, Թիթեղ, Թէօդորոս 1-կն ր, Կարին, Չէյիթ, Մարահարթ, Չէլիկ, Կոտրոն, Դեղարդ, Չիչէք, Անուշ, Վաղարշակ, Գարամի, Վազր 50-կն և, Չիւն 25 և, Մեղը 20 և, ԲԱՋԱՄԻՐՏ Խ. 3 անձեր 3 ր, Ալան, Ժիճեմակ, Աստղիկ, Ճապօն 50-կն և, Կարճաստակ, Լուսափայլ, Նապաստակ 25-անկ. և, ՉՈՐԱՆՈՒՄՔ Խ. Ազգիկ 5 ր, Լոյս, Արդուճ, Արեգակ 50-կն և, Պուծիկ 30 և, Չիւղիք 25 և, Ժամացոյց, Ճառագայթ, Մաշինա 20-կն և, Մալխաս 10 և. Գմր. 146 ր. 55 և.

**ԼԵՉԻԱԿ ՆՈՐԱԿԱԳՄ Մ-ՂԻ ԳԱՆՃԱՐԱՆՈՒՄ ՍՏԱՅԵԼ ԿՆ ԵՆ ՀԵՏԵՎԵԱԿ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ.—**

Նւիրիկ նն՝ Պ. Պ. Տերեւ, Սուր, Արամ 2-կն ր, Դաղիստան, Հարազատ 50-կն և, Սերպիկ, Համար 3-կն ր, Հսկայ 1 ր. 50 և, Հրացան, Մինաս Ս, Միհրան, Էմբրոզ, Հուր, Դամայեան Եւկիանոս, Ազգասէր, Վառօղ եւ Արազ 1-կն ր. Գմր. 24 ր 50 և.

**ԼԻԲՍԻՆԵԱՆ Մ-ՂԻ ԳԱՆՃԱՐԱՆՈՒՄ ՍՏԱՅԵԼ ԿՆ.—**

ՋԼՆԱՄԵՐ Խ.— Արամ եւ Վրէժ-Արծրունի 7-կն Ֆ, Խաչիկ 6 Ֆ, Երևան, Արշակ, Զօր-Փաշա, Կարկուտ եւ Հայմենասէր 2-կն Ֆ, Վահան եւ Մանիա 1-կն Ֆ, ՄԱՐԶՍ Խ.— Մըկըրատ 4 Ֆ, Սմբատ, Ժիրանի, Մամիկոն 2-կն Ֆ, Կայծակ Հաււադ, Անանուն 1-կն Ֆ. ԿՇԻՌ ԽՐԱԽԱՅ Խ.— Փայլուն 7 Ֆ, Ան-Արամ 6 Ֆ, Դուրիան, Ատրուշան, Մարալ, Վահրէ, Լապտեր 2 Ֆ, Աղեղ 1 Ֆ. ԱԽՇԱՆ Խ.— Ռշտունցի, Անիւծ, Բագէ 3-կն Ֆ, Արծի 2 Ֆ, Մ. Ազատեան, Վարդազիս, Սուրէն, Արտաւազ, Գողթան եւ Անանուն 1-կն Ֆ, ԴՈՒԹԻԿ Խ.— Սրախայկ Վրիժառու, Մաղուկեցի 11-կն Ֆ, Բարակոփ, Փրփուր, Խառն, Շուշանց 10-կն Ֆ, Ժիւժան 6 Ֆ, Բարկէն 5 Ֆ, Ալանց 4 Ֆ.

Նւիրատուութիւն եւ Հանգանալուութիւն.—  
3. Բարակեօզեան 6 Ֆ, Շամաճյան 10 Ֆ, Պապաշան 3 Ֆ. Արծի 5 Ֆ, Ընկերներէ 53. 65 Ֆ, Դուժիկ՝ 10 Ֆ, Տէլուէ 2 Ֆ. Վիճակէն 27 Ֆ, Գանձանակի հասոյթ 14 Ֆ, 40 ս. Գմր. 305 Ֆ 5 ս.

**ՊՐԱՅԻԱՅԻ Մ-ՂԻ ԳԱՆՃԱՐԱՆՈՒՄ ՍՏԱՅԵԼ ԿՆ.—**

Պօղոս Պաղտասար եւ Մելիք Մանուէլեան 20-կն Ֆ, Գըրիզը Ստեփանեան 7 Ֆ, Թորոս Մանուկեան 6 Ֆ, Տիկին Մա-նիշակ Մուրատ, Խաչիկ Պօղոս, Յակոբ Յովհաննէսեան, Մահակ Ժաղոսեան, Պետրոս Մարտիրոս, Յուսէփ Վարդանեան, Աւետիս Մարգարեան, Սարգիս Տօնիկեան, Բագէ Միստան, Մանուկ Խաչիկեան, Յարութիւն Կիրակոսեան, Վարդան Յունեան, Լօս Աստուրեան, Մուրատ Թառօսեան, Մարգար Միլիթարեան, Պետրոս Մանուկեան, Գրիզը Յարութիւնեան, Յակոբ Վարդան, Յարութ. Յովհաննէսեան 5-կն Ֆ. Գմր. 148 Ֆ.

**ՄԱՐԱՂԱՅԻ Մ-ՂԻ ԳԱՆՃԱՐԱՆՈՒՄ ՍՏԱՅԵԼ ԿՆ.—**

Սուլթանից 6 թուման, Գ. Բահանայից 2 թ. Վահագնից 3 թուման, Գմր. 11 թ.

**ՄՐԳԱՍԱՆ Մ-ՂԻ ԳԱՆՃԱՐԱՆՈՒՄ ՍՏԱՅԵԼ ԿՆ.—**

- 1 ԺՆՍՏՈՏ քաղաքից Պ. Սարգիս Տարմանեանի ներկայութեամբ կազմակերպուած ընկերների նւիրատուութիւնները.— Վահրէ, Աճառար, Շեմուկ, Բարգէն, Հայրենասէր 1-կն րուք. Պողոպատ, Մուրադ, Թշնամի 3-կն ր. Աշտ 5 ր. Վահան 2 ր. Լեզու 50 և. Գմր. 21 ր. 50 և.
2. ԲԱՄԱՆՎԱՆ Մ-ՂԻ «Մրգաստան» քաղաքի (1904 փետ 22-ից սկսած) «Չէյթուն» խ. մուտքի նւիր 50 կու. Ալան 12 անս. անմմմ. 25-կն և. (3 ր.), Վահանից մուտքի նւիր 50 և. կրկին Վահան 1904 թ. Մարտ — 1905 թ. Մարտ 12 ամսմմ. 3 ր. Գմր. 7 ր.
3. ԹՇԵԼ գիւղի «Մասիս» խ. անմմ. Պ. Պ. Նահապետ, Չէյթունցի, Հնչակունի եւ Հայկունի 1-կն ր, Կրակ եւ Ազգասէր մուտքի նւիր 1 ր. 50 և, Հայկից 50 և, կրկին 1904 թ. Մարտ — Սեպտ. 1-ը 6 ամսմմ. 3 ր, Նոյն գիւղի «Մայր—Հայաստան» կանանց խ. անմմ. Տի. Արմէնուհի 1904 թ. Մարտ—Օգոս. 6 ամսմմ. 1 ր 50 և. Գմր. 10 ր 50 և. (Շար.)